

*Ռեմ Ղազանջյան*

**ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԸ**

**ԵՎ**

**ԵՐԻՏՅՈՒՐԵՐԸ**



Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա  
Արևելագիտության ինստիտուտ


327(47+57:56) 119

Ռեմ Ղազանջյան

Բուժնիկները և երիտթուրքերը

Նոր փաստաթղթեր ռուս-թուրքական  
հարաբերությունների մասին  
(1920-1922թթ.)

18058  
A II



Երևան 1998

*Ռեմ Ղազանջյան. Բոլշևիկները և երիտթուրքերը. Նոր փաստաթղթեր ռուս-թուրքական հարաբերությունների մասին (1920-1922թթ.). Երևան. 1998:*

*Սույն գիրքը նվիրված է գրականության մեջ քիչ հայտնի թեմային. 1920-1922թթ. բոլշևիկների և երիտթուրքերի (Էնվերի, Ջեմալի և այլոց) կապերին, որոնք ընթանում էին զուգահեռ խորհրդա-քենալական հարաբերություններին:*

*Յեղիմակը երկար տարիներ Մոսկվայում ուսումնասիրել է փակ, չհետազոտված արխիվային նյութեր և իր գրքում բերում է մինչև այժմ անհայտ բազմաթիվ փաստեր ու փաստաթղթեր, որոնք նոր լույս են սփռում այդ տարիներին խորհրդա-թուրքական հարաբերությունների վրա:*

*Ուսումնասիրության երկրորդ մասում բերվում են նորահայտ արխիվային փաստաթղթեր:*



**Մեկենասությամբ  
Արմեն և Բերսաբե Ճերեճեան Հիմնադրամի  
ԱՄՆ**

**This Publication was made possible by  
Armen and Bersabe Jerejian Foundation Inc.  
USA**

*Ուեմ Ղազանջյան. Բուլշևիկները և երիտթուրքերը. Նոր փաստաթղթեր ոռու-թուրքական հարաբերությունների մասին (1920-1922թթ.). Երևան. 1998:*

*Սույն գիրքը նվիրված է գրականության մեջ քիչ հայտնի թեմային. 1920-1922թթ. բուլշևիկների և երիտթուրքերի (Էնվերի, Ջեմալի և այլոց) կապերին, որոնք ընթանում էին զուգահեռ խորհրդա-քեմալական հարաբերություններին:*

*Չեղինակը երկար տարիներ Մոսկվայում ուսումնասիրել է փակ, չհետազոտված արխիվային նյութեր և իր գրքում բերում է մինչև այժմ անհայտ բազմաթիվ փաստեր ու փաստաթղթեր, որոնք նոր լույս են սփռում այդ տարիներին խորհրդա-թուրքական հարաբերությունների վրա:*

*Ուսումնասիրության երկրորդ մասում բերվում են նորահայտ արխիվային փաստաթղթեր:*



Մեկենասությամբ  
Արմեն և Բերսաբե Ճերեճեան Հիմնադրամի  
ԱՄՆ

This Publication was made possible by  
Armen and Bersabe Jerejian Foundation Inc.  
USA

Ղազանջյան Ռենմ (ծնվ. 1934, Մոսկվա): ՀՀ ԳԱԱ  
Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող: Ջրադվում է  
խորհրդա-թուրքական պատմության հարցերով: Հեղինակ է  
բուլշևիկների և երիտթուրքերի միջև 1920-ական թվականների սկզբին  
ընթացած հարաբերությունների պատմությանը նվիրված  
աշխատությունների՝ «Բուլշևիկները և երիտթուրքերը. Նոր  
փաստաթղթեր ռուս-թուրքական հարաբերությունների մասին (1920-  
1922թթ.)» (Մոսկվա, 1996, ռուսերեն), «Լեոնային Ղարաբաղի  
ինքնորոշման նախապատմության շուրջ» (Մոսկվա, 1997, ռուսերեն):

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այնպես է ստացվել, որ գաղտնագերծված արխիվային փաստաթղթերը, որոնք տասնամյակներ շարունակ թաքցվել են հետազոտողներից, այսօր մատուցում են բազմաթիվ անակնկալներ, որոնց մասին մենք անգամ չէինք կռահում: Այդպիսիք են Ռուսաստանի երբեմնի փակ արխիվների ստորև տպագրվող փաստաթղթերը, որոնք նոր լույս են սփռում 1920-1922թթ. ռուս-թուրքական, այդ թվում նաև խորհրդա-քեմալական՝ հարաբերությունների վրա:

Ինչպես հայտնի է, 1920թ. ապրիլին Թուրքիայում հաղթանակեց ազգային-ազատագրական շարժումը, որն իր ղեկավարի՝ Մուստաֆա Բեմալ փաշայի (Աթաթուրքի) անվամբ կոչվեց քեմալական: Թուրքական նոր կառավարության առաջին քայլերից մեկը եղավ Մուստաֆա Բեմալի 1920թ. ապրիլի 26-ի դիմումը Վ.Ի.Լենինին, որում, մասնավորապես, ասվում էր, թե նրանք «... պարտավորվում են մեր (այսինքն՝ քեմալականների – Ռ.Ղ.) ողջ աշխատանքը և մեր բոլոր գործողությունները (Անտանտի դեմ – Ռ.Ղ.) համակցել ռուսաստանյան քոլշևիկների հետ...»<sup>2</sup>, ինչը դրական ընդունելություն գտավ Մոսկվայում: Սրանից ելնելով՝ խորհրդային ղեկավարությունը, դեռևս չունենալով բավարար և հավաստի տեղեկություններ քեմալականների վերաբերյալ, այն ժամանակաշրջանում վերջիններիս համարում էր «առաջադեմ և դեմոկրատական տարր մուսուլմանության մեջ, ... (որի) կործանումը կարող է հանգեցնել հեղափոխության և մեր (այսինքն՝ խորհրդային Ռուսաստանի – Ռ.Ղ.) դեմ սրված ամենահետադիմական պանիսլամիզմի և մոլեռանդության ժամանակավոր, սակայն չափազանց բուռն զարգացմանը»<sup>3</sup>: «Փոքր Ասիայում սուլթանի գլխավորությամբ մեր դեմ սրբազան պատերազմի հայտարարումը՝ քեմալականների դեմ այդ հետադիմական տարրերի հաղթանակի դեպքում, – պարզաբանում էր ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողկոմ Գ.Վ.Չիչերինը՝ Անդրկովկասի խորհրդային ներկայացուցիչներին ուղղված 1920թ. սեպտեմբերի 24-ի նամակում, – կարող է նոր լուրջ բարդությունների ենթարկել և՛ Բաքուն, և՛ ընդհանրապես՝ մեր դրությունը հարավ-արևելքում»<sup>4</sup>: Այս պատճառով խորհրդային ղեկավարությունը, ինչպես պարզվում է Չիչերինի

նամակներից, «քեմալականների հանդեպ բարեկամական քաղաքականությունը ... չափազանց կարևոր» էր համարում՝ թուրքիան դարձնելով ՌԽՖՍՀ արևելյան քաղաքականության կենտրոնը<sup>5</sup>։ Ընդ որում՝ նկատի էր առնվում նաև այն, որ «թուրքական ազգայնականների (այսինքն՝ քեմալականների – Ռ.Ղ.) ներգրավումն Արևելքի դեմոկրատական հեղափոխական շարժումների հոսանքի մեջ չափազանց հզորացնում է մեր (այսինքն՝ Ռուսաստանի – Ռ.Ղ.) դրությունը, հեշտացնում է այդ շարժման զարգացումն ամբողջ Մերձավոր Արևելքում», ինչպես նաև՝ «ուժգնորեն առաջ է մղում» «արևելյան հարցերի զարգացումը» խորհրդային կառավարության կողմից<sup>6</sup>։

Սակայն ինչպես երևում է հրապարակվող փաստաթղթերից, քեմալականների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու և նրանց ռազմական ու նյութական օգնություն ցույց տալու<sup>7</sup> հետ մեկտեղ, ինչը Չիչերինի վկայությամբ, «... թե՛ վերջինիս (Թուրքիայի – Ռ.Ղ.) և թե՛ մեզ (այսինքն՝ Ռուսաստանի և բոլշևիկների – Ռ.Ղ.) համար ինքնապաշտպանության ակտ էր»<sup>8</sup>, Խորհրդային կառավարությունը միաժամանակ որոշակի կապեր էր պահպանում նաև Թուրքիայի ոչ քեմալական ուժերի հետ, ինչը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով և, առաջին հերթին, քեմալական ղեկավարության անկայունությամբ՝ որպես բոլշևիկների դաշնակից և համախոհ՝ Անտանտի դեմ մղվող պայքարում։ Դեռ ավելին, 1920թ. վերջին ամիսներին ՌԽՖՍՀ և քեմալական Թուրքիայի հարաբերություններն այնքան վատացան և նրանց՝ միջև հակասություններն այնքան սուր բնույթ ստացան, որ ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի հանձնարարությամբ Անդրկովկասի խորհրդային ներկայացուցիչներին Վ.Ի.Լենինի և Ի.Վ.Ստալինի կողմից ուղարկված հեռագրում ցուցում էր տրվում «մերկացնել քեմալականների երկերեսանիությունը» և հարցում արվում՝ «կարելի՞ է համարել, որ քեմալականները դեռևս չեն հեռացել մեզանից և միացել Անտանտին»<sup>9</sup>։ Անգամ մեկ տարի անց, ինչպես երևում է Գ.Վ.Չիչերինի՝ Վ.Ի.Լենինին գրած նամակից, «... նա (Քեմալը – Ռ.Ղ.) կարող է մեզ համար (այսինքն՝ ՌԽՖՍՀ և բոլշևիկների – Ռ.Ղ.) անախորժություններ ստեղծել Կովկասում, հրոսակախմբեր ուղարկել

✓ և դրամով աջակցել հակախորհրդային տարրերին...»<sup>10</sup>:

Այս պատճառով այն ժամանակի խորհրդային կառավարության շրջաններում համարում էին, թե պետական շահերի տեսակետից «օգտակար է կոնտակտի մեջ լինել զուգահեռ թուրքական կենտրոնի հետ՝ քեմալականներից բացի»<sup>11</sup>: Նույն միտքը Չիչերինն արտահայտել է նաև 1920թ. ապրիլի 18-ի ՌԿ(բ)Կ ԿԿ ուղղված նամակում. «Մեզ համար շատ կարևոր է աջակցել որևէ մեկին, որը չի պատկանում քեմալականների գերիշխող խմբավորմանը, վերջիններիս վրա ավելի շատ ճնշում գործադրելու հնարավորություն ունենալու համար»<sup>12</sup>, թեև ՌԽՖՍՊ հիմնական հենարանը թուրքիայում, այնուամենայնիվ, մնում էին քեմալականները, և բոլշևիկներն ամեն կերպ երիտթուրքերին հետ էին պահում Քեմալի դեմ ակտիվ գործողություններից:

✓ Այս կապակցությամբ ուշադրության է արժանի այն փաստը, որ դեռևս 1919թ., առաջին համաշխարհային պատերազմում թուրքիայի պարտությունից հետո Գերմանիա փախած նրա առաջնորդները, ի դեմս երբեմնի կառավարող եռյակի (Ջեմալ փաշա<sup>13</sup>, Թալեաթ փաշա<sup>14</sup> և Էնվեր փաշա<sup>15</sup>, որոնք իրենց հայրենիքում երկիրը համաշխարհային պատերազմի մեջ ներգրավման և հայերի 1915թ. ցեղասպանության համար հեռակա կարգով դատապարտված էին մահվան), սկսեցին կապեր հաստատել այնտեղ գտնվող ռուսաստանյան բոլշևիկների հետ՝ ներկայացնելով իրենց որպես հեղափոխականներ և Քեմալի կողմնակիցներ ու նույնիսկ ներկայացուցիչներ, ինչը նման պայմաններում չէր կարող իր հետքը չթողնել այն ժամանակ դեռևս բավարար փորձ չունեցող երիտասարդ խորհրդային պետության արտաքին և ներքին քաղաքականության վրա:

«Դեռ 1919թ., – հիշում էր հետագայում Կոմունիստական Ինտերնացիոնալի և ՌԿ(բ)Կ հայտնի գործիչներից մեկը՝ Կառլ Ռադեկը, Կոմինտերնի IV կոնգրեսին (1922թ.) ներկայացված զեկուցման մեջ, – երբ մենք անջատված էինք թուրքիայից Դենիկինյան, Անդրկովկասյան, Վրացական ճակատներով, մուսավաթականներով և դաշնակցականներով, Քեմալի կառավարությունը և թուրք վտարանդիները սկսեցին կապեր որոնել Խորհրդային Ռուսաստանի հետ: (...) 1919թ. սեպտեմբերին սկսվեցին թուրքիայի ներկայացուցիչների բանակցու-

թյունները Բեռլինում խորհրդային ներկայացուցիչների հետ»<sup>16</sup>: 1920թ. երիտթուրքական մի շարք գործիչներ գալիս են Մոսկվա՝ իրենց ծառայություններն առաջարկելու վերջինիս, ինչը և ընդունվում է խորհրդային կառավարության կողմից՝ Ռուսաստանի շահերն ապահովելու համար:

Այսպես, 1920թ. ապրիլի կեսերին, մինչև քեմալականների Ռուսաստան գալը, Կովկասյան ճակատի Դեղազմխորհրդի անդամ Գ.Կ.Օրջոնիկիձեն խորհրդային զորքերի հրամանատարությանն ուղղված հեռագրում խորհուրդ էր տալիս օգտվել երիտթուրքական հայտնի գործիչներ խալիլ փաշայի<sup>17</sup> և Նուրի փաշայի<sup>18</sup> կողմից առաջարկված ծառայություններից՝ Ադրբեջանի խորհրդայնացման ժամանակ Բաքվի նավթահանքերը ոչնչացումից պաշտպանելու համար, միաժամանակ ակնարկելով, իբր հիշյալ անձինք ունեն Քեմալի կարգադրությունը՝ «...այնուհետև խորհրդային հանրապետությանը վերաբերվել որպես բարեկամական պետության՝ իր ծառայություններն առաջարկելով խորհրդային աշխատակիցներին»<sup>19</sup>: Մեկ ամիս անց Օրջոնիկիձեն Կենտրոնին զեկուցում է վերջինիս հարցման կապակցությամբ, որ իրենք կարող են Կովկասյան ճակատի պաշարներից խալիլին տրամադրել (հավանաբար՝ Քեմալին հանձնելու համար, ում հետ կապ էր պահպանվում նաև խալիլի միջոցով) «...15000 հրացան, 20 ծանր հրետանի, 30-40 թեթև հրետանի, ոչ մեծ քանակության փամփուշտներ, 50-60 զնդացիր»<sup>20</sup>: Դրապարակվող փաստաթղթերից ակնհայտ է դառնում նաև այն, որ նույն տարվա օգոստոսին խորհրդային կառավարությունը մտադրություն ուներ օգտվելու էնվեր փաշայի կապերից՝ Գերմանիայում ՌԽՖՍՀ համար զենք և ռազմական հանդերձանք ձեռք բերելու<sup>21</sup>, իսկ այնուհետև՝ Միջին Ասիայում բասմալների հետ ընդհարումները դադարեցնելու համար: Թեև, այդուհանդերձ, գիտակցում էր նաև, որ նա պատկանում է «ավելի իմպերիալիստական խմբակցության»<sup>22</sup>: Վերջապես նույն՝ 1920թ. ՌԽՖՍՀ կառավարությունն Աֆղանստան է ուղարկում թուրքական «եռապետության» մեկ այլ անդամին՝ Ջեմալ փաշային, «... հետախուզական նպատակով և Աֆղանստանի էմիրի վստահությունը շահելու ու նրա մոտ պատասխանատու զինվորական պաշտոն ստանալու

առաջադրանքով»<sup>23</sup>, ինչի շնորհիվ հաջողվեց աֆղանական իշխանություններին համոզել պայմանագիր կնքել Ռուսաստանի հետ՝ մերժելով Անգլիայի համանման առաջարկությունը<sup>24</sup>:

Բացի այդ՝ խորհրդային ղեկավարությունը նկատի ուներ նաև այն, որ, օրինակ, Էնվերը և նրա զինակիցներն ունեն «...մեծ կապեր ողջ Կենտրոնական Եվրոպայում, ինչպես նաև կապեր և ակտիվ խմբեր Եգիպտոսում, Ալժիրում, Մարոկկոյում և այլուր», և որ «նրանք այնպիսի կապեր և աշխատանքային ասպարեզ ունեն, որպիսիք չունեն քեմալականները»<sup>25</sup>, իսկ Ջեմալը «մուսուլմանական աշխարհի ականավոր ներկայացուցիչներից մեկն» է և «մեծ հեղինակություն է վայելում» Մերձավոր Արևելքում՝ «մուսուլմանական ցեղերի» շրջանում<sup>26</sup>:

Այս պատճառով ՌԽՖՍՀ կառավարությունն անհրաժեշտ էր համարում նշված նպատակները իրականացնելու համար աջակցել երիտթուրքերին, որպեսզի «Թուրքական ոչ քեմալական ազգայնականների կազմակերպությունը կարողանա գոյատևել»<sup>27</sup>: Դեռ ավելին, անգամ քեմալականների հետ Մոսկվայի խորհրդա-թուրքական պայմանագիրը ստորագրելուց հետո (1921թ. մարտ) ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոն 1921թ. ապրիլի 23-ի նիստում՝ Վ.Ի.Լենինի, Ի.Վ.Ստալինի, Լ.Բ.Կամենևի, Կ.Բ.Ռադեկի և այլոց մասնակցությամբ որոշում է ընդունում «Էնվերի խմբին դրամական օժանդակություն հատկացնելու» մասին, ինչպես նաև ըստ էության հավանություն է տրվում նրա խնդրանքին՝ Ռուսաստանում երկու թուրքական թերթերի հրատարակման վերաբերյալ<sup>28</sup>, դրանով իսկ ձգտելով սոցիալիստական գաղափարների տարածել Արևելքի երկրներում:

Սակայն սխալ կլինի կարծել, թե ՌԽՖՍՀ կառավարության և երիտթուրքերի միջև ոչ մի էական, միմյանց հերքող հակասություններ չեն եղել, և հարաբերությունները նրանց միջև այնպես սերտ էին, ինչպես այդ մասին մինչև օրս գրում են: Այսպես, դեռևս 1920թ. մարտին, այսինքն՝ նախքան երիտթուրք գործիչների Ռուսաստան ժամանելը, արտգործողկոմ Գ.Վ.Չիչերինը Վ.Ի.Լենինին ուղղված նամակում, որն ի կատարումն ընդունվեց ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի կողմից<sup>29</sup>, նշում էր, որ «իսլամը ... նրա ավանդույթները և նրա գաղափարախոսությունը

մեզ համար (այսինքն՝ Խորհրդային իշխանության – Ռ.Ղ.) նույնքան թշնամական են միջազգային ասպարեզում, ... որքան Կազանի և Ուֆայի բուրժուականների շահերի պաշտպանության հողի վրա», ուստի «...պանիսլամիզմին մենք պետք է վերաբերվենք որպես թշնամական մի ուժի, որի հետ հնարավոր են նույնպիսի ժամանակավոր գործարքներ, ինչպիսիք հնարավոր են այս կամ այն էստոնական կամ լեհական բուրժուազիայի հետ, և ո՛չ ավելին», և ապա՝ «Մենք չենք կարող երկարատև դաշինքի հույսեր կապել մեր հանդեպ ըստ էության թշնամական ուժի հետ, և կարող ենք սոսկ վարկաբեկել մեզ՝ փորձելով կնքել այնպիսի դաշինքներ, որոնց դեպքում քաղաքականապես միշտ խաբված կողմի դերում կհայտնվենք և սկզբունքորեն կնպաստենք հետադիմական գաղափարախոսության ուժեղացմանը»: Յետևաբար, շարունակում է Չիչերինը, «...պետք է նախկինից է՛լ ավելի զգուշավորությամբ կշռադատենք մեր ամեն մի քայլը, երբ գործ ենք ունենում մուսուլմանական աշխարհի և մասնավորապես՝ պանիսլամիզմի հետ»<sup>30</sup>: Նույն էր ասվում նաև 1920թ. հունիսին՝ Արևելքում աշխատող կոմունիստներին ուղղված Արտգործժողկոմի հատուկ հրահանգում (թեզերում), որը կազմվել էր ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի հանձնարարությամբ<sup>31</sup> և հանձնվել III (Կոմունիստական) Ինտերնացիոնալի երկրորդ կոնգրեսի նյութերի նախապատրաստման՝ Վ.Ի.Լենինի գլխավորած հանձնաժողովին. «Անտարակույս, թշնամական պետք է համարել կրոնական հողի վրա ծագած գաղափարախոսությունները, ինչպիսին պանիսլամիզմն է: Նրա նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը հետագայում կարող է հանգեցնել նրան կապակցվող հետադիմական միտումների ամրապնդմանը»<sup>32</sup>:

Այսպիսով, ծրագրային ցուցումներից հետևում է, որ բուլշևիկների կապը երիտթուրքական գործիչների հետ կարող էր ոչ այլ, քան՝ ժամանակավոր և պայմանական բնույթ կրել՝ տվյալ պատմական պահին Խորհրդային պետության խնդիրներով և կենսական շահերով խիստ սահմանափակված:

Մասնավորապես, այդ մասին է վկայում այն փաստը, որ 1920թ. մայիսին ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի որոշմամբ Վ.Ի.Լենինի կողմից հալիլ փաշայի ընդունելությունը պայմանավորվում էր «եթե ընկ. Չիչերինը

1921

անհրաժեշտ գտնի» պայմանով<sup>33</sup>, և ընդունելությունն այդպես էլ չկայացավ: Լենինը չնդունեց նաև Էնվերին և 1920թ. օգոստոսին Չիչերինին ուղղված գաղտնի երկտողում գրեց, որ, եթե նա չօգնի Ռուսաստանին Կարմիր Բանակի համար Եվրոպայում գեներ և հանդերձանք ձեռք բերելու գործում, ապա՝ «գրողի ծոցը Էնվերին»<sup>34</sup>: Մեկ տարի անց Լենինը նույնքան կտրականապես հրաժարվեց ընդունել նաև Ջեմալ փաշային, չնայած Չիչերինի թախանձագին խնդրանքին, որ «...անհրաժեշտ է մեծագույն սիրալիրություն հանդես բերել նրա նկատմամբ և ցույց տալ նրան, թե որքան բարձր ենք գնահատում մենք նրան», քանի որ նա «իր բոլոր ուժերը գործի է դնում դեպի մեր (այսինքն՝ ՌԽՖՍՀ – Ռ.Ղ.) կողմը Աֆղանստանի կողմնորոշմանն աջակցելու համար»<sup>35</sup>: Առավել ևս, շարունակում է նույն նամակում Չիչերինը, որ «նա (Ջեմալը – Ռ.Ղ.) աչքի է ընկնում մեծ ինքնասիրությամբ և մեծարանքի հանդեպ ունեցած սիրով և, եթե իրեն վիրավորված համարի կամ ինչ-որ տեղ իր հանդեպ արհամարհանք տեսնի, դա կարող է վատ անդրադառնալ մեր հետագա հարաբերություններին», և ապա՝ «...ես անհրաժեշտ կհամարեի, որ Դուք համաձայնվեիք ընդունել նրան», քանի որ, «եթե մենք նրա հանդեպ չափազանց բարեհամբույր և սիրալիր լինենք, դրանով կամրանա Քաբուլում (Աֆղանստանի մայրաքաղաքում – Ռ.Ղ.) մեր քաղաքականությանը նրա վերին աստիճանի եռանդուն սատարումը»<sup>36</sup>:

Սակայն, Լենինը Չիչերինի նամակի վրա մակագրեց. «Ես դեմ եմ տեսակցությանը: ...Ավելի լավ է որևէ առիթ և ձև գտնել, բայց ինձ հետ տեսակցություն չկազմակերպել»<sup>37</sup>, և այս ընդունելությունը ևս տեղի չունեցավ:

Երիտթուրքական գործիչների հանդեպ նույնանման վերաբերմունք ցուցաբերվեց նաև մի շարք այլ դեպքերում: Այսպես, դեռ 1920թ. ապրիլին Գ.Կ.Օրջոնիկիձեն Յուսիսային Կովկասում տեղաբաշխված խորհրդային բանակի հրամանատարությանը խորհուրդ էր տալիս «չհրապուրվել» Խալիլ փաշայի առաջարկություններով, «քանի որ նա ցանկացած պահի կարող է մեզ բավականին նողկալի խաղեր հրամցնել»<sup>38</sup>: Գնական լայն տարածում գտած տեսակետի, Էնվերի հանդեպ բացասաբար վերաբերվեց նույն 1920թ. սեպտեմբերին

Բաքվում Կոմունիստական Ինտերնացիոնալի կողմից գումարված՝ Արևելքի ժողովուրդների համագումարը. «Էնվերի հայտարարությունը (համագումարում ելույթ ունենալու ցանկության մասին – Ռ.Ղ.) բողոքով և վրդովմունքով դիմավորվեց համագումարի կողմից», – հաղորդում էր այդ օրերին Օրջոնիկիձեն<sup>39</sup>: Նախագահությանը ներկայացրած նրա հռչակագիրը նախապես բժախնդրորեն խմբագրվեց անհրաժեշտ ուղղությամբ և համագումարում ընթերցվեց մեկ ուրիշի կողմից: Դրանով «նրան (Էնվերին – Ռ.Ղ.) զրկեցին մեր դեմ զենք գործի դնելու հնարավորությունից», – տողերիս հեղինակին շատ տարիներ անց այս առիթով գրել է բուլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ, Բաքվի համագումարի կազմակերպիչներից մեկը՝ Ելենա Ստասովան<sup>40</sup>: Էնվերը հռչակագրի կապակցությամբ քննադատության ենթարկվեց համագումարի հատուկ որոշման մեջ, որն ընթերցեց հունգար կոմունիստ Բելա Կունը. «Համագումարն անհրաժեշտ է համարում հատուկ զգուշություն ցուցաբերել շարժման այն առաջնորդների նկատմամբ, ովքեր անցյալում սպանդի են տարել թուրք գյուղացիներին և բանվորներին հանուն իմպերիալիստական մի խմբի շահերի և այդպիսով աշխատավոր զանգվածներին կրկնակի կորստյան են բերել հանուն հարուստների մի փոքր խմբի և բարձրագույն սպայության շահերի»<sup>41</sup>, իսկ ազգային և գաղութային հարցի մասին զեկուցման մեջ, որով համագումարում հանդես եկավ Կոմունիստական Ինտերնացիոնալի ներկայացուցիչ Մ.Պ.Պավլովիչը (Վելտմանը), ասվում էր, որ «Բրեստի կոնֆերանսում (նկատի ունի 1918թ. Բրեստ-Լիտովսկի բանակցությունները – Ռ.Ղ.) թուրքական ներկայացուցիչների վարքը վրդովեցուցիչ էր» և «թուրք ազգայնականները չբավարարվեցին Բրեստի հրեշավոր հաշտության պայմաններով» և «զրավեցին Արդահանը, Կարսը, Բաթումը»<sup>42</sup>, ընդհուպ մինչև Բաքու: Ընդ որում հատկապես շեշտվում էր, որ 1918թ. «թուրքերի ներկամյա իշխանությունը Բաքվում բազմաչարչար քաղաքի պատմության մեջ ամենամոռայլ էջն էր...»<sup>43</sup>: Իսկ երկու ամիս անց Կովկաս ուղարկված ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամ Ստալինը խորհրդային ղեկավարությանը հայտնում էր, որ, ըստ ստացված տեղեկությունների, «Էնվեր, Թալիաթ կոմպանիան Թուրքիայում հանդիսանում է քեմալականների թշնամի, հետևապես՝ նրանց չի կարելի վստահել»<sup>44</sup>:

Էլ չենք ասում այն մասին, որ ավելի ուշ էնվերը բացահայտորեն անցավ խորհրդային իշխանության հակառակորդների կողմը՝ դառնալով Միջին Ասիայում բասմաչների ղեկավարը, որից հետո խորհրդային ղեկավարության վերաբերմունքը երիտթուրքերի հանդեպ կտրուկ փոխվեց: Մասնավորապես, 1922թ. մայիսին ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոն ընդունեց որոշում՝ «Հայտարարել էնվերին Անգլիայի գործակալ և Արևելքի ժողովուրդների թշնամի»<sup>45</sup>, ձեռնարկելով նրա «անհապաղ վերացումը»<sup>46</sup>, ինչով և ավարտվեց բուլշևիկների կապը երիտթուրքերի հետ<sup>47</sup>:

\* \* \*

Ստորև հրապարակվող արխիվային փաստաթղթերը վերցված են Նորագույն պատմության փաստաթղթերի պահպանման և ուսումնասիրության ռուսաստանյան կենտրոնի (Российский центр хранения и изучения документов новейшей истории, Москва) երբեմնի փակ ֆոնդերից՝ Վ.Ի.Լենինի (ֆ.2), Վ.Ի.Լենինի Քարտուղարության (ֆ.5), ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի (ֆ.17, օп.3), Ի.Վ.Ստալինի (ֆ.558), ինչպես նաև ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի (ֆ.64) և Գ.Կ.Օրջոնիկիձեի (ֆ.85):

Փաստաթղթերի ոճը հնարավորին չափով պահպանված է: Մի շարք դեպքերում մեր կողմից բաց է թողնված թեմային չառնչվող մասը, որը յուրաքանչյուր անգամ մատնանշվում է համապատասխան տեղերում: Հրապարակված նյութերում մեր կողմից նշվող թվականները բերվում են քառակուսի փակագծերում: Ծանոթություններում զետեղված կենսագրական տվյալները սահմանափակված են սույն գրքի ժամանակագրական շրջանակներով:

N.N. 1-3, 5-7, 9, 13, 14, 18, 21, 22 և 31 փաստաթղթերը և N.1 ծանոթագրությունում բերված նյութերը հրապարակվում են առաջին անգամ:

N.N. 23-27 և 29 փաստաթղթերը տպագրվում են ըստ «Большевистское руководство. Переписка. 1912-1927» (Москва, РОССПЭН, 1996) փաստաթղթերի ժողովածուի: Մնացած դեպքերում (N.N. 4, 8, 10-12, 15-17, 20, 28, 30 և 32) փաստաթղթերն առաջին անգամ տպագրվել են

սույն գրքի նախորդ հրատարակության մեջ (տե՛ս Рем Казанджян. Большевики и младотурки. Новые документы о российско-турецких отношениях (1920-1922 гг.) Москва, 1996, (с.11-20):

N.N. 1 և 3 փաստաթղթերը ծրագրային բնույթ են կրում և ցույց են տալիս երիտթուրքերի հետ բոլշևիկների հարաբերությունների ելակետային տեսական հիմքը:

Չրապարակվող փաստաթղթերի մի մասը հայտնաբերվել է սույն գրքի հեղինակի նաև Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի (Մոսկվա) ավագ գիտաշխատող-պայմանագրորդ եղած ժամանակ:

## Փ Ա Ս Տ Ա Թ Ղ Թ Ե Ր

№ 1

Հատված ՌԽՖՍՀ արտաքին գործերի

ժողովրդական կոմիսար

Գ.Վ.Չիչերինի պաշտոնական

գրությունից՝ ուղղված Վ.Ի.Լենինին՝

1 մարտի 1920թ.

№ 11/185

!.../ Իսլամը, ինչպես և ամեն մի եկեղեցի, նրա ավանդույթները և նրա գաղափարախոսությունը նույնքան թշնամական են մեզ համար միջազգային ասպարեզում, որքան Կազանի և Ուֆայի բուրժուաների շահերի պաշտպանության հողի վրա: !.../ Մենք միշտ չէ, որ բավարար հստակությամբ էինք գիտակցում այս դրությունը: !.../Բուլշևիզմի և պանիսլամիզմի հակադրությունն արդեն միջազգային փաստ է դարձել, և կից ներկայացվող մուսուլմանական բարձրագույն դպրոցների հռչակագիրը վերջնականորեն ֆիքսում է սոսկ այն, ինչն այս պրոցեսում հասցրել է որոշակիորեն ձևավորվել: Անշուշտ, մենք պետք է, ինչպես նախկինում, նման գաղափար առաջադրենք եվրոպական իմպերիալիզմից Արևելքի ազատագրման մեջ մեր դերի մասին, որքանով որ մեզ չեն սահմանափակի դիվանագիտական նկատառումները, քանզի այս գաղափարը կօգնի մեզ գրավել զանգվածներին, սակայն պանիսլամիզմին մենք պետք է վերաբերվենք որպես թշնամական ուժի, որի հետ հնարավոր են նույնպիսի ժամանակավոր գործարքներ, ինչպիսիք հնարավոր են որևէ էստոնական կամ լեհական բուրժուազիայի հետ, և ոչ ավելին: Մեր ելույթներում միանգամայն անթույլատրելի են այնպիսի հայտարարություններ, ինչպես, օրինակ, ինձ հանդիպած մի արտահայտություն՝ «Բուլշևիզմը իսլամի լավագույն բարեկամն է»: Մեր քաղաքականության մեջ անթույլատրելի են այնպիսի գործողություններ, ինչպիսին է Կովկասյան Երկրկոմի<sup>2</sup> պայմանագիրը երիտթուրքերի հետ, որի մասին հաղորդագրության մեջ ավելացվում էր, որ Երկրկոմն

աջակցություն է ցույց տալիս պանիսլամական բնույթի կարգախոսներին և ձգտումներին: Մենք չենք կարող երկարատև դաշինքի հույսեր կապել մեր հանդեպ. ըստ էության, թշնամական ուժի հետ, և մենք մեզ կարող ենք սոսկ վարկաբեկել՝ փորձելով կնքել այնպիսի դաշինքներ, որոնց դեպքում մենք քաղաքականապես միշտ խաբված կողմի դերում կհայտնվենք և սկզբունքորեն կնպաստենք հետադիմական գաղափարախոսության ուժեղացմանը: Մի խոսքով՝ պետք է նախկինից էլ ավելի մեծ զգուշությամբ կշռադատենք մեր ամեն մի քայլը. երբ մենք գործ ունենք մուսուլմանական աշխարհի և, մասնավորապես, պանիսլամիզմի հետ:

Российский центр хранения и изучения документов  
новейшей истории (այսուհետև՝ РЦХИДНИ).  
ф.5. оп.І. д.2054. л.5 и об.

Բնագիր: Մեքենագիր:  
Հրապարակվում է առաջին անգամ:



### Մ. 3

Հատված ՌԽՖՍՀ արտաքին գործերի  
ժողովրդական կոմիսարիատի հրահանգից  
(թեզերից) Արևելքի երկրներում աշխատող  
կոմունիստների համար<sup>13</sup>:

[Ոչ ուշ, քան 14 հունիսի 1920թ.<sup>14</sup>]

Կոմունիստների աշխատանքն Արևելքում պաշտոնական ոչ մի կապի մեջ չպետք է լինի Խորհրդային Կառավարության և նրա գործակալների հետ: Խորհրդային Կառավարության քաղաքականությունը գնում է իր բարդ ուղիներով՝ դիվանագիտական իրադրության ճնշման ներքո և ղեկավարվում է իր գործողությունների ազատությունը խիստ կաշկանդող ըմբռնումներով: Կոմունիստների աշխատանքը պետք է անկախ մնա այս ըմբռնումներից և չպետք է պարտավորեցնի Խորհրդային Իշխանությանը: Կոմունիստները պետք է բացատրեն Արևելքի զանգվածներին Խորհրդային Իշխանության և ՌԽՖՍՀ հեղափոխական առաքելությունը, չտալով որոշակի խոստումներ Խորհրդային Կառավարության անմիջական գործողությունների վերաբերյալ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ՌԽՖՍՀ ինտերվենցիան ձևականորեն որոշված է, ինչպես օրինակ՝ Կովկասում վիճելի տարածքների գրավման ժամանակ:

Կոմունիստների գլխավոր գործունեությունն Արևելքում պետք է լինի իրենց իսկ լիակատար մասնակցությունն արևելյան ժողովուրդների ազատագրական շարժման մեջ: Այս ազատագրական շարժումն ուղղված է եվրոպական, ճապոնական կամ ամերիկյան կապիտալի և իմպերիալիզմի և բուն Արևելքի ժողովուրդների մոտ նրա հետ կապված առավել բարբարոսական շահագործող շերտերի դեմ: Թե հատկապես ո՞ր շերտերն են կապված իմպերիալիզմի ճնշման հետ, կախված է յուրաքանչյուր ժողովրդի մեջ եղած սոցիալական համակցությունից: Ամեն դեպքում Արևելյան ժողովուրդների ազատագրական շարժումը ոչ մի տեղ համազգային չէ: Ամենուրեք իմպերիալիզմն այս կամ այն չափով իր կողմն է գրավել տեղական կեղեքիչներին: Բացառություն են կազմում

միայն լեռնային ցեղերն իրենց տոհմային կենցաղով: Առհասարակ, ասիական ժողովուրդների պայքարն իմպերիալիզմի դեմ միաժամանակ պայքար է նաև սեփական առավել շահագործող շերտերի դեմ:

!.../Մասամբ հենց այդպիսի դեր ունի Թուրքայում սպայությունը: Թուրքիայում Անտանտի հետ կապված է հին փաշաների և հարուստ սպեկուլյանտների ոչ մեծ շահագործող շերտը, ընդսմին Թուրքիայում խոշոր բուրժուազիան թուրքական է: Թուրքերի ժողովրդական զանգվածները բաղկացած են գյուղացիներից, հովիվներից և քաղաքային մանր բուրժուազիայից: Ուժեղ և բազմաքանակ թուրքական սպայությունը կապված է այս զանգվածների հետ, սակայն ունի նաև թուրքական սպաների հետադիմական դերը բացատրող իր կաստայական ձգտումները... Որքան ավելի ուժեղ լինի բուն թուրքական ժողովրդական զանգվածների շարժումը, այնքան ավելի հարկադրված կլինի սպայությունը նրանց արտահայտչի դերը խաղալ: Կոմունիստները չեն կարող ոչ մի ռոպե ընդհատել պայքարը սպայության հետադիմական տարրերի դեմ և չպետք է խաբվեն Անգլիայի դեմ համազգային շարժման վերաբերյալ խոսքերին: Իսկ նրանք պետք է աջակցեն գյուղացիական և մանր բուրժուական շարժմանը՝ այդուհանդերձ չկորցնելով իրենց կերպարը:

!.../Ընդհանրապես, կոմունիստներն Արևելքում պետք է պաշտպանեն հանրապետական ծրագիրը, բայց, օրինակ Աֆղանստանում, որտեղ եմիրի իշխանությունը դեռևս վիճարկելի է, հանրապետական քարոզչությունը վաղաժամ է:

Խորհրդային ձևը դեռևս ոչ մի տեղ Արևելքում պրոլետարական դիկտատուրայի քաղաքական ձևը չի կարող: Գյուղացիական և մանրբուրժուական ուժեղ շարժում ունեցող երկրներում, ինչպես Պարսկաստանում, Խորհրդային ձևը հնարավոր է, որպես փոքր-ինչ պարզունակ, սակայն հետևողական-դեմոկրատական ժողովրդական իշխանություն: Կոմունիստները, նեցուկ կանգնելով այդպիսի Խորհուրդների, պետք է միաժամանակ զանազաններանց տարբերությունը պրոլետարական դիկտատուրայի Խորհուրդներից:

Չոզևորականությունը պետք է դիտվի ընդհանրապես որպես թշնամական ուժ, սակայն նրա հանդեպ վերաբերմունքը պետք է լինի

զգույշ, և այնտեղ, որտեղ զանգվածները դեռևս ամբողջովին կրոնասեր են, և որտեղ միևնույն ժամանակ հոգևորականության զգալի մասը մասնակցում է ազատագրական շարժմանը, բացահայտ պայքարը նրանց դեմ պետք է հետաձգվի: Անտարակույս, թշնամական պետք է համարել կրոնական հողի վրա ծագած գաղափարախոսությունները, ինչպիսիքն է պանիսլամիզմը: Նրա նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը հետագայում կարող է հանգեցնել նրա հետ կապված հետադիմական միտումների ամրապնդմանը: Աջակցություն պետք է ցուցաբերել երիտասարդ աշխարհիկ մտավորականությանը, սակայն կոմունիստները չպետք է անտեսեն տարբերությունը այս՝ ըստ էության, բուրժուական մտավորականության հարցում:

Առհասարակ կոմունիստները, անգամ բացարձակ համոզվածության դեպքում՝ Արևելքի երկրներում ներկայումս կոմունիզմի տնտեսական հողի բացակայության պայմաններում, չպետք է թաքցնեն ո՛չ իրենց իսկական ծրագիրը, ո՛չ էլ՝ ծուլվեն մյուս կուսակցությունների կամ հոսանքների մեջ: Անշուշտ, անհրաժեշտ է մշտապես մերկացնել խորթ հոսանքների կողմից կոմունիստական ձևի կեղծ յուրացումը, որը հազվադեպ է Արևելքում: Որքան էլ որ փոքրաթիվ լինեն կոմունիստներն Արևելյան երկրներում, նրանք պետք է բացահայտորեն և՛ հանգամանալից կերպով բացատրեն, թե ինչ է իսկական կոմունիզմը: Իրենց առջև, սակայն, չդնելով խնդիրներ, որոնց համար տնտեսական իրականությունը դեռևս հող չի պատրաստում, և չտրվելով Արևելքի երկրներում կոմունիստական ծրագրի անցկացման համեմատաբար մոտակա իրականացման հնարավորության պատրանքներից, նրանք պետք է իրենց բուն կոմունիստական գործունեությունը սահմանափակեն գրական աշխատանքով և քարոզչական ոչ մեծ խմբակների ստեղծմամբ, իսկ իրենց գլխավոր գործունեությունը նրանք պետք է նվիրեն արևելյան ժողովուրդների ազատագրական շարժման մեջ իրենց մասնակցությանը:

РЦХИДНИ, ф.2, оп.2, д.312, лл.2-3

Բնագիր: Մեքենագիր:

Յրապարակվում է առաջին անգամ:

**N. 4**

**Վ.Ի.Լենինի երկտողը**

**Գ.Վ.Չիչերինին<sup>15</sup>**

[Ոչ ուշ, քան 20 օգոստոսի 1920թ. <sup>16</sup>]

**Գաղտնի ընկ. Չիչերինին՝ անծամք<sup>17</sup> (վերադարձնել)**

**Ընկ. Չիչերինին: Ինչպես տեսնում եք, գործն ընթացքի մեջ մտավ: Այսօր  
և եթե ենվերի հետ հարցն արագացրեք (քանի որ Տրոցկին<sup>18</sup> մեկնելու է  
վաղը). կգտնենք (Տրոցկու միջոցով, ես խոսել եմ նրա հետ) մի գեներալ  
որն ամեն ինչ կխոստանա ենվերին, միայն թե մենք զենք, շինելներ,  
սապոզներ գտնենք<sup>19</sup>:**

**Եթե ոչ՝ գրողի ծոցը ենվերին:**

**Շտապ:**

**Լենին**

**РЦХИДНИ, ф.2, оп.2, д3-86, л1:**

**Ինքնագիր:**

**N. 5**

**Թուրքեստանյան ճակատի հրամանատար**

**Ս.Վ.Ֆրունզեի և նույն ճակատի Ֆեդոզովխորիդի**

**անդամ Յու.Ի.Իբրահիմովի գաղտնի հեռագիրը**

**Ռուսաստանի Ֆեդոզովխորիդի նախագահ Լ.Դ.Տրոցկուն**

**21 օգոստոսի 1920թ.**

**Երեկ երկարատև զրույց ունեցա Ջեմալ Փաշայի հետ<sup>20</sup> Բուխարայի  
հարցի վերաբերյալ<sup>21</sup>: Նրա կարծիքը, որն ի միջի այլոց շարադրված է  
Մուստաֆա Քեմալ Փաշայի<sup>22</sup> հաղորդման մեջ, այսպիսին է. Բուխարային**

կամ պետք է վճռական հարվածով վերջ տալ, եթե դրա հնարավորությունը կա, կամ զիջել նրան բոլոր հարցերում, սակայն, այսպես թե այնպես, անհրաժեշտ է լիակատար չափով նրան պահել մեր ձեռքում: Հազիվ թե հնարավոր է սպասել խոշոր բնույթի բարդություններ Աֆղանստանի հետ, հարցի շտապ լուծման դեպքում: Այսպիսով՝ դիրեկտիվը ստանալու պահին ամեն ինչ պատրաստ էր հարվածի համար, ամեն ինչ կասեցված է մինչ նոր թուրք[եստանյան] հանձնաժողովի<sup>23</sup> ժամանումը: Դանդաղումն ամենավնասակարն է, ինչ կարող է լինել տվյալ իրադրության դեպքում: Ես և Ճակատի Հեղխորհուրդը մեր խղճի պարտքը համարեցինք այս մասին տեղեկացնել Հանրապետության բարձրագույն մարմիններին:

**Վ.Ի.Լենինի մակագրությունը փաստաթղթի վրա՝ «Կրեստինսկուն<sup>24</sup> և Ստալինին<sup>5</sup> և Բուխարին<sup>25</sup>»:**

**Ի.Վ.Ստալինի երկտողը փաստաթղթերի հակառակ էջի վրա՝ «Առաջարկում եմ տեղեկություններ հավաքել Սոկոլնիկովի<sup>26</sup> մասին և, եթե նա դեռևս չի հասել [Միջին Ասիա], գործել առանց հապաղման՝ ընկ. Ֆրունզեի հանձնարարագրով»:**

Ն.Ն.Կրեստինսկու, Վ.Ի.Լենինի և Ն.Ի.Բուխարինի լրացուցիչ գրառումները փաստաթղթի վրա՝ «Ընդունված է 21-ին: Այսօր 24-ն է: Միանգամայն հնարավոր է, որ 13-ին մեկնած Սաֆ[արով]ը<sup>27</sup> և Սոկոլն[իկով]ը արդեն հասել են, և հարցն արդեն, հավանաբար, լուծված է տեղում: Առաջարկում եմ նոր դիրեկտիվ չտալ: Ն.Կ.[րեստինսկի]:

Համաձայն եմ՝ Լենին  
Համաձայն եմ՝ Ն.Բուխարին»:

РЦХИДНИ, ф.2, оп.2, д.395, л.1 и об.  
Մեքենագիր: Մակագրությունները՝ ինքնագիր:  
Հրապարակվում է առաջին անգամ:

**N. 6**

Հաղորդագրություն՝ զետեղված ՌԽՖՍՀ  
Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի  
Արևելքի բաժնի հույժ գաղտնի տեղեկագրում

1 սեպտեմբերի 1920թ.

Ջեմալ փաշայի թուրքական միսիան<sup>28</sup> Աֆղանստան է մեկնում սպաների, մեր թուրքմեններ Բարակաթուլլայի և Քյալիմ բեյի ուղեկցությամբ, օգոստոսի վերջին: Եթե իրադարձությունները Բուխարայում հաջող լինեն, Ջեմալ փաշան կանցկացնի մի շարք տեղական հանրահավաքներ:

РЦХИДНИ, ф.2, оп.2, д.407, л.2.

Բնագիր: Մեքենագիր:

Հրապարակվում է առափին անգամ:

**N. 7**

Հատված Գ.Կ.Օրջոնիկիձեյի՝ Մ.Ֆ.Լուկինի<sup>29</sup> հետ՝  
ուղիղ գծով կայացած խոսակցությունից

[1-4 սեպտեմբերի 1920թ. <sup>30</sup>]

/.../Համագումարը <sup>31</sup> լավ է ընթանում: Ենվերի հայտարարությունը համագումարի կողմից ընդունվեց բողոքով և վրդովմունքով: Այնպես որ, պետք է ենթադրել, թե նա չի համարձակվի անձամբ ելույթ ունենալ համագումարում: Եթե չի կարելի խոսել համագումարի ինտերնացիոնալիստական տրամադրության մասին, ապա, համենայն դեպս, նրա տրամադրությունը զգալիորեն ավելի ծախ է բացառապես ազգայնական սահմաններից:

РЦХИДНИ, ф.64, оп.1, д.25, лл.247-248.

Հրապարակվում է առափին անգամ:

ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ  
 Լ.Մ.Կարախանի նամակը ՌԿ(բ)Կ Կենտրոնին

26 հունվարի 1921թ.

1920թ. օգոստոսին մեր կողմից Աֆղանստան է ուղարկվել երիտ-բուրջական հայտնի գործիչ Ջեմալ փաշան (նախկին նախարար և Սիրիայում Թուրքական Բանակի հրամանատար)՝ հետախուզական նպատակով և Աֆղանստանի էմիրի վստահությունը շահելու ու նրա մոտ պատասխանատու զինվորական պաշտոն ստանալու առաջադրանքով:

Ներկայումս Ջեմալ փաշային Աֆղանստանի էմիրի կողմից հանձնարարված է Յնդկաստանի սահմանի մոտ կանգնած արևմտյան բանակի վերակառուցումը և հրամանատարությունը: Ջեմալն ինձ գրում է, որ բանակի վերակառուցումը հնարավոր է Աֆղանական կառավարու-թյանը զինվորական հանդերձանք մատակարարելու դեպքում: Ընդ որում՝ մենք հնարավորություն ունենք մի շարք կարմիր զինվորական մասնագետներ ուղարկել այդ բանակում պատասխանատու զինվորա-կան պաշտոններ զրավելու համար:

Լուրջ կարևորություն տալով, մի կողմից, Աֆղանական բանակում մեր ընկերների ներգրավմանը, իսկ մյուս կողմից՝ Անգլիական Յնդ-կաստանի դեմ կանգնած և մեր որոշ ազդեցության տակ գտնվող մարտ-ունակ բանակի ստեղծմանը՝ Արտգործժողկոմն առաջարկում է զինվոր-ական մատակարարմամբ օգնություն ցուցաբերելու և աֆղանական բանակի համար մի խումբ ընկերներ տրամադրելու որոշում ընդունել:

Ջեմալ փաշային բնութագրելու համար հաղորդում ենք, որ նա բուրջական ազգայնական է, տոգորված չէ պանիսլամիզմով, հանդի-սանում է անգլիացիների ռիսերիմ «վրիժառուն» ու թշնամին, որոնց կողմից Կոստանդնուպոլսում հեռակա դատապարտված է մահա-պատժի<sup>22</sup>:

Այս տեղեկությունները մեր կողմից ստուգվել են տարբեր աղբյուր-ների միջոցով: Նա պատկանում է անգլիացիների\* այն խմբին, որը պատրաստ է պայքարել և Քեմալի և ցանկացած այլ ազգային

կառավարության դեմ, որը կհամաձայնվի Անգլիայի հետ հաշտություն կնքել<sup>33</sup>:

Եթե առաջարկությունն ընդունված է, անհրաժեշտ է պարտավորեցնել Արտգործոժողկոմին և Յեղղազմխորհրդին կարճ ժամկետում համաձայնության գալ որոշման իրականացման վերաբերյալ<sup>34</sup>:

РЦХИДНИ, ф.5, оп.2, д.208, лл.7-8

Բնագիր: Մեքենագիր:

Այդպես է բնագրում: Ըստ երևույթին, պետք է լինի «թուրքերի» - Ռ.Ղ.:

№ 9

ՌԽՖՍՀ արտգործոժողկոմ Գ.Վ.Չիչերինի  
նամակը ՌԿ(Բ)Կ Կենտկոմին<sup>35</sup>

18 ապրիլի 1921թ.

Ենվերը ցանկանում է Մոսկվայում երկու թուրքական թերթ հրապարակել: Մեկը նախատեսված է Թուրքիային սպասարկելու համար, իսկ մյուսը՝ ՌԽՖՍՀ տարածքից դուրս գտնվող մուսուլմանական մյուս երկրների համար: Նրանք նպատակ ունեն զարգացնել Արևելքի ազատագրության համար մղվող պայքարը և պիտի կարևորեն խորհրդային Ռուսաստանի նշանակությունը բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրման համար: Անգլիայի հետ պայմանագիրն արգելում է պրոպագանդան Ռուսաստանի սահմաններից դուրս, սակայն Ռուսաստանի ներսում մեզ վրա ոչ մի սահմանափակումներ չի դնում: Թերթերի առաքումը մուսուլմանական երկրներ կատարվելու է ոչ մեր ձեռքերով, այնպես որ պայմանագրի ոչ մի խախտում տեղի չի ունենա: Նկատի ունենալով Ենվերի և քեմալականների միջև գոյություն ունեցող տարածայնությունները, նա չի կարող իր թերթերը հրապարակել որևէ տեղ, բացի Ռուսաստանից: Մեզ համար շատ կարևոր է աջակցել որևէ մեկին, ով չի պատկանում քեմալականների գերիշխող խմբավորմանը՝ վերջիններիս վրա ավելի շատ ճնշում գործադրելու հնարավորություն

ունենալու համար: Էնվերն արդեն մեզ մեծ ծառայություններ է մատուցել քեմալականների հետ մեր ունեցած հարաբերությունների գործում: Սա շատ նրբամիտ մի քաղաքագետ է, որը շատ լավ է ըմբռնում դրությունը և հասկանում, որ մենք պետք ենք իրեն: Մենք առաջարկում ենք թույլատրել նրան՝ հրատարակել իր երկու թերթերը, և լիակատար աջակցություն ցուցաբերել նրան, սակայն թուրքերեն իմացող կոմունիստներից որևէ մեկին հանձնարարել հետևել այս թերթերին և կանոնավոր կերպով մեզ տեղեկացնել նրանց բովանդակության մասին: Իր զեկուցագրի<sup>36</sup> մեջ էնվերը խոսում է այս երկու թերթերի հրատարակումն սկսելու համար անհրաժեշտ՝ միայն ձևական կողմերի մասին, իսկ դրամական օժանդակությունների մասին նա զոնն ներկա պահին չի խոսում: Տվյալ պահին պահանջվում է այս հարցի միայն սկզբունքային լուծումը:

РЦХИДНИ, ф.5, оп.2, д.315, л.38

Բնագիր: Մեքենագիր:

Հրապարակվում է առաջին անգամ:

ՈւխՏԱԴ արտոգործողկոմ Գ.Վ.Չիչերինի նամակը  
ՈԿ(բ)Կ Կենտկոմին՝ Էնվերի վերաբերյալ<sup>37</sup>

22 ապրիլի 1921թ.

Էնվերի խմբին դրամական օժանդակություն հատկացնելու խնդիրը դրվում է առանձին՝ Մոսկվայում նրա կողմից թերթերի հրատարակման հարցից: Դրամական օժանդակությունն անհրաժեշտ է այն բանի համար, որպեսզի թուրքական ոչ քեմալական ազգայնականների կազմակերպությունը կարողանա գոյատևել: Սրանք երիտթուրքական ղեկավարների հին խմբից մնացած տարրեր են, [որոնք ունեն] մեծ կապեր ողջ Կենտրոնական Եվրոպայում, ինչպես նաև կապեր և ակտիվ խմբեր Եգիպտոսում, Ալժիրում, Մարոկկոյում և այլուր: Նրանց դրամ է պետք զանազան երկրներում իրենց նախածեռնող կենտրոնների գոյատևմանը աջակցելու և Եգիպտոս մարդիկ ուղարկելու համար և այլն: Նրանց անհրաժեշտ է տարեկան ընդամենը 15.000 լիրա՝ շատ փոքր մի գումար: Մենք գտնում ենք, որ դա պետք է անել: Նրանք այնպիսի կապեր և աշխատանքային ասպարեզ ունեն, որպիսիք քեմալականները չունեն: Մեզ, բացի այդ, օգտակար է կոնտակտի մեջ լինել զուգահեռ թուրքական կենտրոնի հետ, քեմալականներից զատ: Ինքը՝ Էնվերը թեև պատկանում է ավելի իմպերիալիստական խմբավորման, այդուհանդերձ, որպես նրբամիտ մի քաղաքագետ, քեմալականներից ավելի լավ է կողմնորոշվում այժմյան իրականության մեջ և հասկանում մեր դերը: Մենք դեռ, անկասկած, ստիպված կլինենք օգտվելու նրա քաղաքական ծառայություններից և դիմելու նրա աջակցությանը: Նրա հետ բարեկամություն պահպանելը և նրան մեզ հետ կապելն անհրաժեշտ է:

РЦХИДНИ, ф.2, оп.2, д.612, л.5  
Բնագիր: Մեքենագիր:

ՈւՆՃԱՄ արտագործողկոմ Գ.Վ.Չիչերինի նամակը  
ՌԿ(բ)Կ Կենտկոմին՝ Ե-ի<sup>39</sup> առաջարկի մասին<sup>39</sup>

22 ապրիլի 1921թ.

Արտագործողկոմի կոլեգիան վճռականորեն արտահայտվում է Կոստանդնուպոլսի վերաբերյալ ընկ. Ե.-ի առաջարկության ընդունման օգտին: Նա գտնում է, որ այս առաջարկությունը լուրջ ուշադրության է արժանի: Այս ծրագրի իրականացման ժամանակ, սակայն, անհրաժեշտ է զգուշորեն գործել՝ դիվանագիտական նկատառումներով: Ըստ ընկ. Ե.-ի խոսքերի, վրանգելականներն այնքան կտրականորեն են տրամադրված Անտանտի դեմ, որ նրանք հաճույքով կվերցնեն Կոստանդնուպոլիսը: Խորհրդային Ռուսաստանի հեղինակությունը նրանց շրջանում շատ բարձր է, բայց ոչ այնքան, որ նրանք անձամբ դիմեն մեզ ենթարկվելու մասին: Նրանց կողմից Կոստանդնուպոլսի գրավումից հետո մենք պետք է, ըստ ընկ. Ե.-ի խոսքերի, դիմենք նրանց մոտավորապես այսպիսի մի մտքով. «Անտանտը խաբել է ձեզ և օգտագործել խորհրդային Ռուսաստանի դեմ, բայց ձեզ մոտ այժմ աչքերը բացվել են, և մենք հուսով ենք, որ դուք այլևս չեք գործի ի վնաս Ռուսաստանի աշխատավորների, մենք առաջարկում ենք ճանաչել խորհրդային Խշխանությունը, ձեր հանցագործությունները մոռացվում են, և ձեզ թույլ է տրվում վերադառնալ հայրենիք»: Մեզ մոտ պետք է պատրաստ լինի քաղաքական ապարատ, որպեսզի այդ պահին այն անմիջապես արագորեն Կոստանդնուպոլիս տեղափոխենք, ընդ որում՝ մեծ զգուշություն պահպանելու նպատակով, քաղաշխատողների տեղափոխումը կարող է տեղի ունենալ իբրև թե ինքնազուլի կերպով, իրենց սեփական ցանկությամբ: Մենք, այսպիսով, Կոստանդնուպոլսում դրության տերը կդառնանք: Մեզ անհնար կլինի մեղադրել մեզանից անկախ ծավալվող իրադարձությունների համար: Այնուհետև մենք Կոստանդնուպոլիսը կհանձնենք իր օրինական տերերին՝ բուրքերին, բայց ո՛չ անգորական քեմալականներին՝ Կոստանդնուպոլսից նեղուցներով անջատված, այլ՝ կոստանդնուպոլիսյան քեմալական-

ներին՝ անհամեմատ ավելի ծախս, այսինքն՝ հիմնականում Կոստանդնուպոլսում եղած բանվորական տարրին, որին մենք կկազմակերպենք և կզինենք: Իսկ ձևականորեն՝ Կոստանդնուպոլիսը մեր կողմից կհանձնվի թուրքական պետությանը: ԸՆկ. Ե.-ն ենթադրում է, որ այդ պահին մեր վրանգելականներն առանց դժվարության կգրավեն Անդրիանապոլիսը և Սալոնիկը, այնտեղ կհայտնվեն մեր կոմիսարները, և հազիվ կանգուն մնացող բալկանյան կառավարությունները կտապալվեն, ինչը կարող է վիթխարի քաղաքական ազդեցություն ունենալ նաև Բալկաններից դուրս: Տվյալ պահին պահանջվում է շտապ հետ ուղարկել ըՆկ. Ե.-ին, նրան անհրաժեշտ է երեսուն հազար լիրա: Նա խոստացել է վերադառնալ 20 օր հետո և բացակայում է արդեն երկու շաբաթ: Հարկավոր է անհապաղ ուղարկել նրան շարժիչավոր դրեզինով: Սևաստոպոլսում նրան սպասում է մոտորանավը:

РЦИДНИ, ф.2, оп.2, д.612, л.4

Բնագիր: Մեքենագիր:

Քաղվածք ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի նիստի N17 արձանագրութունից<sup>40</sup>

23 ապրիլի 1921թ.

Ներկա են.

Լենինը, Ստալինը<sup>5</sup>, Կամենևը<sup>4</sup>, Կալինինը<sup>8</sup>,

Մոլոտովը<sup>41</sup>, Ռադեկը<sup>42</sup>, Սուլցը<sup>43</sup>:

**ԼՍԵՑԻՆ**

7. Էնվերի խմբին դրամական  
օժանդակություն հատկացնելու և ընկ. Ե-ի<sup>44</sup>  
մասին:

12. Էնվերի խնդրանքը  
Ռուսաստանում երկու  
թուրքական թերթ  
հրատարակելու մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ**

7. Հավանություն տալ  
ընկ. Չիչերինի  
առաջարկությանը՝  
Էնվերի խմբին  
և Ե-ին դրամական  
օժանդակություն  
հատկացնելու  
վերաբերյալ:  
Մանրամասնու  
թյունների վերաբերյալ  
համաձայնության գալ  
ընկերներ Լենինի և  
Ստալինի հետ<sup>45</sup>:

12. Խնդրանքը  
բավարարել<sup>46</sup>, եթե  
առարկություններ  
չլինեն ընկ. Ստալինի  
կողմից<sup>47</sup>:

РЦХИДНИ, ф.17, оп.3, д.154, лл.2, 3  
Վավերացված պատճեն: Մեքենագիր:

ՈւխՅԱՄ արտոգործողկոմ Գ.Վ.Չիչերինի  
գաղտնի նամակը Վ.Ի.Լենինին

1 հուլիսի 1921թ.

Չարգարծան Վլադիմիր Իլյիչ, [այստեղ է] ժամանել ե.-ի ընկերակիցը, որը նրա հետ մեկնել էր Կոստանդնուպոլիս. Սևաստոպոլից նավապետը նրանց Կոստանդնուպոլիսի փոխարեն տարել էր Անատոլիա, որտեղ նրանց ձերբակալեցին որպես առանց վիզայի արտասահմանցիների: Նրանք Կոստանդնուպոլիս էին հասել միամսյա ուշացումով, և պարզվել էր, որ Դարդանելի մոտ մնացել է ընդամենը 15000 մարդ, ընդ որում անբավարար սպառազինումով: Այնուամենայնիվ մնացել էին այլ հնարավորություններ: Ե.-ն և նրա ընկերները լավ կապեր են հաստատել Կոստանդնուպոլիսի քեմալականների հետ, որոնք շատ ավելի ձախակալան են անգորականներից (սա նշանակալի չափով բանվորական տարր է), իսկ ռուս զինվորների շրջանում ազիտացիոն աշխատանք էին տարել: Եթե անգորական քեմալականները մոտենան Կոստանդնուպոլիսին, այնտեղ տեղի կունենա պայթյուն, և մերոնց կողմից ազիտացիայի ենթարկված ռուս զինվորները կզնան քեմալականների հետ: Եթե միայն հնարավոր լինե՞ր, հիմա պարտիզանական գործողություններ սկսել Անտանտի դեմ, սակայն սա շատ խոշոր միջոցներ կպահանջի. մենք սա համարում ենք ավելորդ և վտանգավոր: Մենք առաջարկում ենք այլ բան, որ Ե.-ն և ընկերները մնան և շարունակեն հիմնկվա ազիտացիոն աշխատանքը: Եթե ապստամբություն լինի, նրանք կօգնեն քեմալականներին տիրել Կոստանդնուպոլիսին. այս հեռակարը հնարավորություն է տալիս օգտվել քեմալականների աջակցությունից, և եթե դա տեղի ունենա, մեր ընկերները կհասնեն այն բանին, որ Կոստանդնուպոլիսը կլինի շատ ավելի ձախակալան տարրերի ձեռքում՝ գլխավորապես հեղափոխականորեն տրամադրված բանվորների: Իսկ ամենակարևորը այն է, որ այս ազիտացիոն աշխատանքը խլում է Անտանտից նախկին կույր գործիքը: Եղան լուրեր, որ այս զինվորներին կփոխադրեն Բաթում. մենք գիտենք նրանց Չեռավոր Արևելք

փոխադրելու ծրագրի մասին: Հեղափոխականացված զինվորներին Անտանտը չի փոխադրի, նրանք կանցնեն մեր կողմը:

Ղա այնքան կարևոր է, որ հանուն այս բանի արժե կատարել անհրաժեշտ ծախսեր: Սրա համար մենք պետք է վճարենք ամսական 10000 թուրքական լիրա: Պետք է նաև ուղարկել մարդիկ, կոմունիստ ազիտատորներ, մոտ 20 մարդ ևս: Այս դեպքում հարկ կլինի ծախսել ամսական ևս 5 հազար լիրա:

Պետգործոժողկոմի կոլեգիան առաջարկում է անել դա:

РЦХИДНИ, ф.2, оп.2, д.711, лл.1-2.

Ինքնագիր

Հրատարակվում է առաջին անգամ:

#### N. 14

Առանձին կովկասյան բանակի հետախուզական վարչության լիազորի զեկույցը<sup>48</sup>

24 օգոստոսի 1921թ.

Խալիլ փաշայի՝ ք.Բաթում ժամանելով պարզ դարձավ, որ նա հարկադրված կլինի մարդիկ հավաքագրելու քեմալականների միջավայրից, ովքեր մեր կողմից հաշվառման էին վերցված՝ մինչ նրա ժամանումը որպես Քեմալի գործակալներ: Անհրաժեշտ էր մշտական հսկողություն սահմանել Խալիլ Փաշայի վրա՝ նպատակ ունենալով պարզել նրա վերաբերմունքը մեր հանդեպ՝ հետագայում իրադարձությունների զարգացման դեպքում: Ի՞նչ կողմից նրան կցված էր գաղտնի աշխատակից Ֆայլը, որը Խալիլ Փաշայի հավաքագրած մարդկանցից մեկի՝ Ֆեյզի էֆենդի Քուրա օղլու խնդրանքով հանձն է առել ուղեկցել նրան և օգնել աննկատ թափանցել Լազիստան, Վիցե քաղաք, ուր նա մեկնում էր գաղտնի հանձնարարություններով: Ուղևորությունը կազմակերպված էր կոնսպիրատիվ կերպով ընկ. Գուլցմանի<sup>49</sup> կողմից, ուն դիմել էր Խալիլ Փաշան աջակցության համար, և օգոստոսի 15-ին

Խալիլ Փաշայի կողմից գործուղված դոկտոր Ռայֆ բեյը Ֆայկի հետ մեկնեցին Բաթումից: Ճանապարհին ոչ մի լուրջ խոսակցություն դր. Ռայֆի հետ չի եղել, սակայն նա սաստիկ հուզվում էր՝ չլինի թե ընկնեն քեմալականների ձեռքը: Երեկոյան ժամը 9-ին իջել են Վիցե քաղաքի մոտակայքում և կես ժամ անց նրանք արդեն Ահմեդ Բեյ Յաջի Թաղին Ջադեի մոտ էին, ում մոտ և ուղևորվում էր դր. Ռայֆը: Գիշերը ժամը 12-ին, երբ մենակ մնացին Ահմեդ Բեյը, դր. Ռայֆը, Ահմեդ Բեյի եղբայր Օսման Բեյը (Վիցե քաղաքի մուդիր-պրիստավը) և Ֆայկը, դր. Ռայֆը պորտֆելից հանեց զանազան նամակներ, և մեկը՝ հասցեագրված Ահմեդ Բեյին Խալիլ Փաշայի կողմից, որում անհատական բնույթի ինչ-որ բաներ կային գրված և, որ գլխավորն է, այնտեղ կային հրահանգներ: Մնացած նամակները հասցեագրված էին տարբեր անձնավորությունների, թուրքական տարբեր քաղաքներ՝ ինչպես Ռիզե, Տրապիզոն, Էրզրում, Սամսուն և այլն: Նամակներից բացի՝ կային շատ հրահանգներ և ցուցումներ: Ահմեդ Բեյը նախ մատնանշեց հանձնարարությունների կատարման դժվարությունը, բայց հետո՝ համաձայնվեց: Յետո նա հարցուփորո՞ծ արեց դր. Ռայֆին Բաթումում և առհասարակ՝ Խորհրդային Ռուսաստանում Խալիլ Փաշայի գործողությունների լեզալության վերաբերյալ: Աշխատո՞ւմ են արդյոք նրանք բուլշևիկների օգնությամբ և աջակցությամբ, թե՞ աշխատանքը ընթանում է կոնսպիրատիվ ձևով:

Դր. Ռայֆը բացատրեց, որ իրենք աշխատում են Խորհրդային Ռուսաստանի հետ կոնտակտի մեջ լինելով, և որ իրենք Մոսկվայից Բաթումի հյուպատոսին ուղղված կարգադրություն ունեն՝ աջակցություն ցուցաբերելու մասին<sup>60</sup>: Ահմեդ Բեյի երկրորդ հարցը վերաբերում էր Բաթումում էնվերականների և թուրք կոմունիստների փոխհարաբերություններին, որին Ռայֆը պատասխանեց. «Առայժմ մենք աշխատելու ենք նրանց հետ միասին, իսկ ապագայում ոչ մի ընդհանուր բան չենք ունենալու»: Դրանից հետո Ահմեդ Բեյը հայտարարեց, որ, եթե էնվերականների աշխատանքի նպատակը Թուրքիայի Խորհրդայնացումն է, ապա նա կտրականապես կիրաժարվի ամեն տեսակի աջակցություն ցուցաբերել: Վերջում դր. Ռայֆը որոշակիորեն հայտարարեց, որ, բացի Խորհրդային Ռուսաստանից, չկա այլ պետություն, որի օգնությամբ իրենք կարողանային հասնել եվրոպացիների լծից թուրք

ժողովրդի ազատագրմանը, հետևաբար և պետք է ժամանակավորապես օգտվել նրա օգնությունից ընդհանուր թշնամու դեմ պայքարելու գործում:

Այնուհետև դր.Ռայֆը հայտարարեց, որ էնվերականները, զավթելով իշխանությունը քեմալականներից, պիտի միավորեն ողջ մահմեդական աշխարհը մեկ ամբողջության մեջ՝ սկսած Թուրքիայից և վերջացրած անդրկովկասյան թաթարներով, Ադրբեջանով և Անդրկասպիական երկրամասով: Ահմեդ Բեյը, համոզվելով, որ էնվերականները Թուրքիայի խորհրդայնացման ոչ մի նպատակ չունեն, համաձայնություն տվեց աշխատել նրանց մոտ: Հաջորդ օրն Ահմեդ Բեյն իր քեռորդի Ռեմիզ Բեյի՝ 53-րդ հետևակային զնդի սպայի օգնությամբ, որը պատահաբար Ռիզեից Վիցե էր ժամանել՝ Բայրամի<sup>61</sup> առիթով, որին հաղորդվել էր ինչպես դր. Ռայֆի ժամանման նպատակը, այնպես էլ ողջ խոսակցությունը, և որից համաձայնություն էր ստացել աջակցություն ցուցաբերել Ահմեդ Բեյին, վերջինս Ահմեդ Բեյն պետական կատերով Ռեմիզ Բեյի հետ միասին բոլոր թղթերը և նամակները տարավ Տրապիզոն, որից հետո դր.Ռայֆը՝ Ֆայկի օգնությամբ աննկատ վերադարձավ Բաթում:

РЦХИДНИ, ф.2, оп.2, д.886, лл.1 и об.

Բնագիր: Մեքենագիր տեքստ:

Հրապարակվում է առաջին անգամ:

ՌԻՖԵՐԱՆ արտոգործող կոմ Գ.Վ.Չիչերինի գաղտնի  
 ցամակը Վ.Ի.Լենինին<sup>62</sup>

14 հոկտեմբերի 1921թ.

Աֆղանստանից այստեղ է ժամանել հռչակավոր Ջեմալ փաշան և շատ կցանկանար, որ Դուք ընդունեիք իրեն: Մենք նրան Աֆղանստան էինք ուղարկել դեռևս անցյալ տարի, մինչ անգլիական պայմանագիրը կնքելը: Նա այնտեղ արտակարգ երևելի դիրք է գրավել: Որպես մուսուլմանական աշխարհի ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Աֆղանստանում ամենուրեք նրան դիմավորել են գրեթե թագավորական մեծարանքով: Ինքը՝ էմիրը, որը շատ խելամիտ և առաջադեմ հակումներով մարդ է, մեծ արհամարհանքով է վերաբերվում իր հետամնաց նախարարներին, և Ջեմալ փաշան ձեռք է բերել բացառիկ ազդեցություն նրա վրա: Նա ստացել է Աֆղանական Բանակի Ղլխավոր Տեսուչի պաշտոնը և զբաղված է բանակի վերակառուցմամբ: Նա Աֆղանստանում կազմակերպում է նաև մինչ այժմ նախնադարյան վիճակում գտնվող վարչակարգը, ֆինանսները և դատարանը: Նա, այսպիսով, էմիրյան լուսավորյալ աբսոլյուտիզմի Ղլխավոր իրականացնողն է: Նրա բոլոր մտորումներն ուղղված են Անգլիայի դեմ պայքարելուն, և այդ պատճառով Քաբուլում բոլոր վճռական պահերին նա իր ողջ ուժերը գործի էր դնում մեր կողմը՝ կողմնորոշմանը աջակցելու համար: Ներկայումս էմիրը միանգամայն որոշակիորեն և հետևողականորեն այս կողմնորոշմանն է հետևում: Սրանով մենք մեծապես պարտական ենք Ջեմալ փաշայի ազդեցությանը: Քանի որ նա Աֆղանստանում բարձր պաշտոն է զբաղեցնում, մենք ձեռքներս լվանում ենք Անգլիայի առջև: Եթե նա դուր չի գալիս Անգլիային, դա մեր գործը չէ, այլ՝ գործն է էմիրի, որը նշանակել է նրան այդքան բարձր պաշտոնի: Նրա այստեղ ժամանման մասին մենք իմացանք այն ժամանակ, երբ նա արդեն Տաշքենդում էր, սակայն, բոլոր դեպքերում անհարմար կլինի թե՛ նրա նկատմամբ, և թե՛ Աֆղանստանի նկատմամբ՝ արգելել բարեկամական պետության այդպիսի բարձրաստիճան պաշտոնյային մուտք գործել Ռուսաստան: Նա հիմա

մեկնում է Բեռլին, որպեսզի կարգավորի իր ընտանեկան գործերը և այնուհետև վերադառնա Աֆղանստան՝ իր ֆունկցիաները կատարելու: Նկատի ունենալով, որ նրա որոշ խնդրանքները մենք ի վիճակի չենք կատարել, առավել ևս անհրաժեշտ է մեծագույն սիրալիրություն հանդես բերել նրա նկատմամբ և ցույց տալ նրան, թե որքան բարձր ենք մենք գնահատում իրեն: Նա աչքի է ընկնում մեծ ինքնասիրությամբ և մեծարանքի հանդեպ ունեցած սիրով և, եթե իրեն վիրավորված համարի, կամ ինչ-որ տեղ իր հանդեպ արհամարհանք տեսնի, դա կարող է վատ անդրադառնալ մեր հետագա հարաբերությունների վրա: .

Ուստի ես անհրաժեշտ կհամարեի, որ Դուք համաձայնվեիք ընդունել նրան<sup>53</sup>: Եթե մենք նրա հանդեպ չափազանց բարեհամբույր և սիրալիր լինենք, դրանով իսկ կամրանա Քաբուլում մեր քաղաքականության նրա վերին աստիճանի եռանդուն սատարումը:

P.S.Նա խնդրում է զենք և 400.000ռ. ոսկով՝ Աֆղանստանում իր «օրինակելի դիվիզիայի» համար և 700.000ռ. ոսկով՝ Հնդկաստանի սահմանաբնակ ցեղերի մեջ քարոզչություն վարելու համար: Պետք չէ՝ նրան կտրուկ հիասթափեցնել<sup>54</sup>:

РЦХИДНИ, ф.2, оп.2, д.950, л.1 и об.  
Բնագիր: Մեքենագիր, հետգրությունը՝  
ծեռագիր:

№ 16

Վ.Ի.Լենինի երկտողը Գ.Վ.Չիչերինին Ջեմալ  
փաշայի վերաբերյալ նրա նամակի կապակցությամբ<sup>55</sup>

16 հոկտեմբերի 1921թ.

Ընկ. Չիչերին! Ես դեմ եմ տեսակցությանը: [Եթե] ես կիսով չափ  
խոստանամ, դա վնասակար կլինի: Մերժեմ՝ դարձյալ վնասակար է:  
Ավելի լավ է որևէ առիթ և ձև գտնել, սակայն չկազմակերպել տեսակցու-  
թյուն ինձ հետ:

РЦХИДНИ, ф.2, оп.2, д.950, л.1 и об.  
Ինքնագիր:

№ 17

Հատված ՌԽՖՍՀ արտգործոժողկոմ Գ.Վ.Չիչերինի  
նամակից՝ ուղղված Վ.Ի.Լենինին<sup>56</sup>

20 հոկտեմբերի 1921թ.

!.../Եթե Մեջլիսը ընդունի համաձայնագիրը<sup>57</sup>, ապա մեր առջև կժազի  
ենվերականների հարցը: Սակայն այստեղ ևս մենք անմիջապես  
կբախվենք դրամական հարցին: Եթե մենք ենվերին մեծ դրամական  
գումարներ չտանք, նրա բոլոր ջանքերն անհույս կլինեն: Եթե նա գա  
իշխանության, նրա առջև կկանգնեն նույն ֆինանսական դժվարություն-  
ները, ինչ որ Քեմալի առջև, նույնիսկ ավելի մեծ չափով, և առանց մեր  
կողմից մեծ դրամական օժանդակությունների կամ փոխառությունների  
նա երկար չի դիմանա: Եթե ընտրենք ենվերին աջակցելու ուղին, ապա  
անհրաժեշտ կլինի մեզ համար որոշել՝ կարո՞ղ ենք, արդյոք, մենք վճարել  
այն շատ թանկ գինը, որ կարժենա այդ աջակցությունը: Սա հարկավոր  
է մանրազնիք քննել: Սակայն ենվերի հետ մեր առավել մերձեցումը կլինի  
քեմալականների և մեր միջև հարաբերությունների սառեցման բնական

արդյունքը: Էնվերի հետ կապված է նաև Ջեմալ փաշան: Միայն վերջինիս շնորհիվ կայացավ Աֆղանստանի հետ մեր պայմանագիրը<sup>58</sup>: Այսպիսով, Ջեմալի հարցը դառնում է ավելի արդիական՝ քեմալականների կողմնորոշման փոփոխման կապակցությամբ: Աֆղանստանում խորհրդային կողմնորոշման գլխավոր փաստարկներից մեկը Ջեմալի հետ մեր բարեկամության փաստն էր, և վերջինիս ճակատի փոփոխությունը շատ ուժգին կանդորադառնա Աֆղանստանի քաղաքականության վրա, մինչև որ այնտեղ ռեակցիա չառաջանա երկարատև պատմական ուժի՝ իմպերիալիզմի դեմ Աֆղանստանի պայքարի հետևանքով: Սկզբնական շրջանում մեր դժվարություններն Աֆղանստանում կավելանան: Ջեմալ փաշան, ի միջի այլոց, խիստ անհանգստացած էր Չիտայից ստացված մի հեռագրի մեջ սպրդած, վրանգելականների վաղիվոստոկ ժամանելու մասին լուրով, այնտեղ ասված է, թե վրանգելականները կենտրոնացած են Բոմբեյում: Աֆղանստանի դեմ անգլիացիների ծրագրերի մասին Անգորայից միաժամանակ ստացած տեղեկությունների կապակցությամբ՝ Ջեմալ փաշան խիստ անհանգստանում է՝ արդյոք անգլիացիները չե՞ն պատրաստվում վրանգելականներին հանել Աֆղանստանի դեմ: Քանի որ Ջեմալը մյուսներից առավել է պատասխանատու այն բանի համար, որ Աֆղանստանը մերժել է անգլիական պայմանագիրը և ստորագրել մեր պայմանագիրը, նա չափազանց հիվանդագին է զգում պատասխանատվություն, եթե այնպես պատահի, որ Աֆղանստանը ռազմական աղետի մեջ հայտնվի: Ես անձամբ կասկածում եմ՝ թույլ կտա՞ն, արդյոք, վրանգելականներն՝ օգտագործել իրենց որպես թնդանոթի միս աֆղանցիների դեմ:

Ինձ մոտ Ջեմալի հուշագրի<sup>59</sup> երկու կրկնօրինակներ կան, ուղարկում եմ դրանք Ձեզ և Լև Դավիդովիչին<sup>60</sup>:

РЦХИДНИ, ф.5, оп.1, д.2059, лл.15-16  
Բնագիր: Մեքենագիր:

Թուրքիայում ՌեսՖՍՀ լիազոր ներկայացուցիչ  
Ս.Պ.Նազարենուսի հույժ գաղտնի ծածկագիրը<sup>61</sup>

ՌեսՖՍՀ Արտգործոժողկոմ Գ.Վ.Չիչերինին, Վ.Ի.Լենինի մակագրությամբ

21 հոկտեմբերի 1921թ. <sup>62</sup>

Հաղորդում եմ քաղվածք՝ ունիոնիստների ԿԿ-ի<sup>63</sup> նույն կուսակցության Անգորայի ԿԿ-ին ուղղված, իմ կողմից բռնագրավված նամակից. «§2. Օրերս Թիֆլիսում Խորհրդային Ռուսաստանի և Կովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների հետ համատեղ, իրենց իսկ խնդրանքով, կոնֆերանս կայացավ: Խորհուրդների ներկայացուցիչներն ասում էին, թե Խորհուրդները պետք է շարունակեն, ինչպես նախկինում, օգնել Անատոլիային իր պայքարում, սակայն նրանք ոչ մի դեպքում չեն կարող վստահություն ընծայել Մ.Քեմալի սկզբունքներին և կերպարանքին: Դրա հետ մեկտեղ նրանք օգնում են նրան միայն մեր խնդրանքի համաձայն. եթե մենք իշխանության գլուխ անցնենք, ապա նրանք, համենայն դեպս, մեզ կգերադասեն անգույն կառավարությամբ, ..., եթե մեր կողմից իշխանությունը գրավելու փորձ կատարվի, ապա կարծում են, որ Անատոլիայի դիմադրության ուժը կթուլանա: Խորհուրդներն ամենևին չեն ցանկանում, որ Թուրքիան լինի կոմունիստական, նրանք ցանկանում են Թուրքիային տեսնել ուժեղ, բայց ո՛չ թշնամական՝ Խորհրդային Ռուսաստանին: Մենք ևս նույնպիսի նպատակ ենք դրել՝ ստեղծել ուժեղ Թուրքիա միայն այն բանի համար, որ ձեռք բերվի լավ և ամուր խաղաղություն, ուստի և խնդրել ենք Խորհուրդներին՝ օգնել Մ.Քեմալին, միասին ... տեղեկացնել նրանց՝ այդ առիթով մեր կողմից ընդունված որոշումների մասին: Այդ պատճառով Խորհուրդների կողմից, համենայն դեպս, չի կարող լինել ոչ մի շարժում Անատոլիայի դեմ, հակառակը՝ կմեծացնեն օգնությունը և աջակցությունը»: Դուք, իհարկե կհասկանաք թե ի՞նչ է սա նշանակում, եթե չմոռանաք, որ Քեմալը գրեթե գիտակցում է թե ի՞նչ են անում էնվերականները: Առավել ևս՝ կոնֆերանսը չի կարող աննկատ անցել Մ.Քեմալի կողմից: Ես խնդրում եմ Ձեզ՝ այսուհետև ժամանակին տեղեկացնել ինձ այդպիսի քայլերի

մասին, քանի որ միշտ չէ, որ ինձ կհաջողվի նման նամակներ բռնագրավել: Դրությունը շատ լուրջ է...մենք բացահայտորեն հույս չենք դնում էնվերի վրա: Այդպիսի կոնֆերանսներ պետք է կազմակերպել ո՛չ Կովկասում, որտեղ չափից ավելի շատ են բերանբացները: Մ.Քեմալը կովկասյան աղբյուրներից միշտ տալիս է ինձ հսկայական կույտ ...ընկ.-ներ Լեզրանը, Մդիվանին, Սվանիձեն...Լեզրանին իմ դեմ, որոնց առկայությունը կհաստատի նաև Միխայլովը: Մ.Քեմալը երեկ հարցրեց ինձ, թե ո՞վ է նշանակված իմ փոխարեն և ե՞րբ եմ Մոսկվա գնալու: Այս ամենը վկայում է թուրքերի քաջ իրազեկության մասին, ուրեմն նշանակում է՝ նրանք գիտեին նաև կոնֆերանսի մասին: Սա պառակտում է Քեմալի հետ: Ես սա համարում եմ անժամանակ. հատկապես, երբ հաջողվել է հարկադրել Մ.Քեմալին՝ մերժել ֆրանս-թուրքական համաձայնագրի մեր դեմ ուղղված հողվածները: Խնդրում եմ տալ պարզաբանում:

[Լենինի մակագրությունը Ստալինին]

«Ընկ. Ստալին,  
հասկացե՞լ եք, արդյոք,  
թե ի՞նչ է սա  
նշանակում:  
7/XI Լենին»<sup>64</sup>

[Յեռագրի սկզբում Լենինն ընդգծել է «ունիոնիստներ» բառը և նրա դիմաց լուսանցքում գրել «ո՞վ է սա»:]

РЦХИДНИ, ф.2, оп.2, д.990, л.1.  
Մեքենագիր պատճեն: Ընդգծումը տեքստում, լուսանցքային  
նշումները և հավելագիրը՝ ինքնագիր:  
Յրապարակվում է առաջին անգամ:

ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամ Վ.Ի.Ստալինի  
պաշտոնական գրութիւնը Ռուսաստանի  
Յնդռազմխորհրդի նախագահ Լ. Դ. Տրոցկուն<sup>65</sup>

2 նոյեմբերի 1921թ.

Երեկ ինձ մոտ էր ՋԵՄԱԼ ՓԱՇԱՆ (ՍՈՒՐԻՑԻ<sup>66</sup> ներկայությամբ):  
Ջրույցից (համեմայն դեպս՝ ինձ համար) պարզվեց (այն տեեց երեք ժամ),  
որ՝

1) Մենք պետք է աջակցություն ցուցաբերենք՝ կրկնակի կրճատելով  
Ջեմալի պահանջները, իսկ ապստամբների պահանջները՝ մոտ 80  
տոկոսով:

2) Մենք պետք է տանք Ջեմալին Քարուլ գնալիս 10 կամ 5 փորձառու  
զինվորական մուսուլման հրահանգիչներ (այդպիսիք մեզ մոտ կան)  
ձևականորեն Ջեմալին օգնելու, փաստորեն, ինչպես դրամի, այնպես  
էլ՝ զինվորական մատակարարման ծախսումների ճշգրտությունը  
վերահսկելու համար (Ջեմալը չի առարկում):

Ինձ համար պարզ է, որ, ի դեմս Ինդոսի հովիտներում և Փենջաբի  
շրջանում մեծամասնություն կազմող մուսուլմանական ցեղերի, որոնց  
շրջանում Ջեմալը մեծ ազդեցություն է վայելում, մենք ունենք ինչ-որ մի  
բազա, որտեղից կարելի է լուրջ վնաս հասցնել Անգլիային, եթե վերջինս  
հարվածի մեզ 1922 թվականի գարնանը կամ ամռանը: Բացի այդ, եթե  
մենք հնարավորություն տանք Ջեմալին՝ Աֆղանստանում ունենալ զոնն  
մի բրիգադ (լավ կազմակերպված) մեր և թուրք հրահանգիչներով, ապա  
դրանով իսկ իրական բազա կստեղծենք Աֆղանստանում հակա-  
անգլիական ազդեցության համար, որը նույնպես շատ կարևոր է մեզ  
համար և առանց որի երկրորդ խնդիրը (անմիջական ներգործություն  
ապստամբական շարժման վրա Յնդկաստանում) անիրագործելի է: Այս  
ամբողջը մեզ վրա կնստի 100.000 ռուբլի ոսկով՝ միանվագ, անմիջա-  
կանորեն ապստամբների առաջնորդներին, զումարած տարեկան  
100.000 ռուբլի ոսկով՝ թուրքական և ռուս-մուսուլմանական հրահան-  
գիչներին պահելու համար, զումարած 6000 հրացան (անգլիական կամ

գերմանական), գումարած մի քանի միլիոն անգլիական հրացանային փամփուշտներ, 12 Մաքսիմ գնդացի, գումարած 12 կամ 8 հրանոթ և, վերջապես, մեկ մուսուլմանական տպարան:

Ես կարծում եմ, որ մենք կարող ենք և պարտավոր ենք հանձն առնել այս: Այլապես՝ կհայտնվենք Աֆղանստանում մեր ազդեցության թուլացման վտանգի առջև (հետևապես՝ համապատասխանաբար կուժեղացնենք Անգլիայի ազդեցությունը) և կկորցնենք զարմանը կամ ամռանն Անգլիային լրջորեն խայթելու հնարավորությունը, եթե դա պահանջի միջազգային իրադրությունը:

Ես կարծում եմ, թե այլևս պետք չէ դանդաղել, և վաղն այդ հարցը պետք է լուծել Բաղբյուրոյում<sup>67</sup>:

[Էջի լուսանցքում երկրորդ կետի դիմաց կապույտ մատիտով գրված է «Դեսպանորդ», ապա կարմիր մատիտով՝ «1 ռուս սպա, 1 ռուս քարտուղար»: Էջի լուսանցքում մյուս տեղերում գրված է «Տպարան», «100.000ռ.»]

РЦХИДНИ, ф.558, оп.2, д.51, л.1 и об.  
Բնագիր: Բազմացված, ուղղված և  
ստորագրված մեքենագիր օրինակ:

ՌԽՖՍՄ արտգործոժողկոմ Գ.Վ.Չիչերինի ծածկագիրը  
 Թուրքիայում ՌԽՖՍՄ լիազոր ներկայացուցիչ  
 Ս.Պ.Նազարենուսին

6 նոյեմբերի 1921թ.

Էնվերի ուղևորության մասին Դուք բազմիցս տեղեկացվել եք: Նա մեկնեց Բաթում մի քանի ընկերների դիմավորելու, և հավատացնում էր ինձ, թե կաջակցի Քեմալին, քանի դեռ Քեմալը շարունակում է պայքարը ներխուժման դեմ, և միայն այն դեպքում կպայքարի Քեմալի դեմ, եթե Քեմալը դավաճանի: Բաթումում էնվերն իրեն այլ կերպ պահեց՝ դրժելով իր խոսքը: Մենք հեռագիր ենք ուղարկել, որ նրան Մոսկվա վերադարձնեն: Այդ պահին նա Թիֆլիս էր գնացել, ընդ որում՝ միայն ձեր ծածկագիր հեռագրից՝ մեկ մեկ երեք հինգ մենք տեղեկություն ստացանք, որ իբրև այնտեղ խոսվում էր Քեմալի անվստահելիության մասին: Թիֆլիսի ընկերները մեզ պարզապես ասացին, որ այդ պահին Քեմալի վրա ուժգին ճնշում է եղել աջից և սպասվել էր նրա տապալումը ստամբուլցիների կողմից: Ուստի նրանք այդ պահին էնվերի ուղևորությունը Թուրքիա ճիշտ ժամանակին են համարել: Սակայն մեզանից հեռագիր է եղել՝ Մոսկվայից չթողնել նրան: Մենք կրկնեցինք այդ դիրեկտիվը, մինչդեռ բախտը կրկին ժպտաց Քեմալին: Մեր դիրեկտիվը միանգամայն նպատակահարմար ստացվեց: Էնվերին Թուրքիա չթողեցին: Մենք նրան Մոսկվա կանչեցինք, բայց նա մեկնեց նախ Բուխարա՝ կարծելով, թե այնտեղ կհանդիպի Ջեմալին՝ աֆղանական սահմանի վրա: Այսպիսով՝ մեր դեմ կանակածներ տածելն անարդարացի է:

РЦХИДНИ, ф.5, оп.1, д.2117, л.37.

Բազմացված մեքենագիր օրինակ:

№ 21

Ի.Վ.Ստալինի պատասխան երկտողը Վ.Ի.Լենինին<sup>68</sup>

7 նոյեմբերի 1921թ.

«Ունիոնիստները»՝ դրանք էնվերականներն են («Միություն և առաջադիմություն»)<sup>69</sup>: Խոսքը գնում է իշխանության համար քեմալականների դեմ պայքարող էնվերականների ԿԿ\*-ի նամակի մասին, բռնագրավված Նացարենուսի կողմից: Ոչ մի կարևոր բան հաղորդագրությունը չի պարունակում. «Լիազոր ներկայացուցչի» սովորական հիստերիկա:

РЦХИДНИ, ф.558, оп.1, д.5192, л.1.

Ինքնագիր:

Յրապարակվում է առաջին անգամ:

Կենտրոնական կոմիտե, - Ռ.Ղ.:

ՌԽՖՍՀ արտգործոժողկոմ Գ.Վ.Չիչերինի նամակը՝  
ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամ Ի.Վ.Ստալինին

11 դեկտեմբերի 1921թ.

Ենվերը Բուխարայում եղավ սոսկ ուղանցաբար: Երբ հաջողվեց մեծագույն դժվարությամբ նրան դուրս կորզել Բաթումից՝ դա արվեց Չարջոուում Ջեմալի թախանձագին հրավերների օգնությամբ հանդիպելու համար: Երբ Չարջոու ուղևորվելու ճանապարհին Ենվերը հայտնվեց Բուխարայում, Ջեմալն արդեն Մոսկվայում էր: Ենվերը այն ժամանակ խնդրում էր հնարավորություն տալ իրեն՝ գնալ Աֆղանստան, որպեսզի Ջեմալի բացակայության ժամանակ փոխարինի նրան, սակայն Ջեմալը և ես հենագրերով հեղեղեցինք Ենվերին՝ կանչելով նրան Մոսկվա: Ենվերը գնաց որսի և չվերադարձավ: Յուրենկի<sup>70</sup> տեղեկությունների համաձայն՝ նա փախել է Աֆղանստան: Այսօր ես Ջեմալից ստացա Մյունխենից Բեռլինով ուղարկված գերզաղտնի նամակ<sup>71</sup>, որում նա ենթադրություն է արտահայտում, թե Ենվերը խելագարվել է. նրա վերջին նամակները Մոսկվայից իրենց մեջ արդեն պարունակում էին հավասարակշռության բացակայությունը մատնանշող տարօրինակություններ, այնուհետև հարաճուն անհավասարակշռության դրսևորումն եղան Բաթումյան արկածները, և հետո, երբ Ջեմալը Ենվերին Մոսկվա էր կանչում, նրա պատասխանները տարօրինակ և անկանոն էին, վերջապես՝ նրա անհետանալն ապացուցում է, որ նա վերջնականապես խելագարվել է: Ջեմալը երկյուղ ունի, թե արդյոք Ենվերը չի՞ փախել Ֆերգանա, ինչը ցույց են տալիս ակնարկներն Ենվերի՝ Նուրի փաշային գրած նամակում<sup>72</sup>: Ջեմալը ոչնչի առաջ չի կանգնի, որպեսզի խափանի այն չարիքը, որն Ենվերը դեռևս կարող է գործել: Տվյալ պահին նա գտնում է, թե անհրաժեշտ է սա պահել հույժ գաղտնի:

Այդ ժամանակ Դուլցմանը տեղեկացնում է, որ խալիլը ցանկանում էր մեզանից դրամ ստանալ Ենվերից անկախ մի կազմակերպություն ստեղծելու համար, սակայն հանկարծ գիշերը նա փախել է Բաթումից: Նրան ձերբակալել են քաղաքի շրջակայքում, և նա բացատրել է, թե

ցանկացել է սահմանի մոտ ազդեցություն գործել ծանոթ թուրք զինվորականների վրա և ապա՝ վերադառնալ: Այժմ Հոլցմանը ուղարկում է նրան Թիֆլիս:

Չգիտեմ, որքանով կարելի է Ջեմալի զեղումները հալած յուրի տեղ ընդունել. չկա՞, արդյոք, այստեղ ինչ-որ մի խաղ:

РЦХИДНИ, ф.5, оп.2, д.315, л.266.

Բազմացված մեքենագիր օրինակ՝  
ստորագրված Չիչերինի կողմից:  
Հրապարակվում է առաջին անգամ:

Հատված Թուրքեստանի հանձնաժողովի անդամ  
Յուկերմանի նամակից՝ Աֆղանստանում ՌԽՖՍՀ  
լիազոր ներկայացուցիչ Ֆ.Ֆ.Ոսակունիկովին

[1922թ. մինչև օգոստոսը] <sup>73</sup>

Էնվերը, սպառնալով խոշորագույն բարդություններով, խորհուրդ է տալիս մեզ՝ թողնել Միջին Ասիան և հնարավորություն տալ, որ թուրքեստանցիները և բուխարացիները իրենք լուծեն իրենց խնդիրները: /.../Տարօրինակ պատմություն է սա: Չկարողացանք մենք այդ թյուրքական առյուծին ընտելացնել մեր նպատակներին: Հավանաբար, մեր կողմից ցուցաբերված անփութությունը խորացրել է այս հուզումնալից անձնավորություն հոգեբանական դրաման, որը քշված է Բուխարայի որջն ասես այն բանի համար, որ այնտեղից ջանքեր գործադրի՝ վրեժ լուծել մեզանից այս անփութության համար: /.../ Անշուշտ, հնարավոր է, որ հոգեբանական պահն այստեղ լրացրել է սոսկ էնվերով չվերջացող ինչ-որ ընդհանուր քաղաքականության կշռադատվածությունը: Մենք ոչինչ չգիտենք աֆղանա-էնվերական հարաբերությունների մասին: Սակայն, ինձ մոտ այնպիսի տպավորություն է ստեղծվել, թե էնվերի մոտ ամեն ինչ սկսվել է հոգեբանությունից, բայց Միջին Ասիայում հանգամանքները բարեհաջող դասավորելու շնորհիվ, ավարտվել է քաղաքականությամբ, որն արդեն մեծագույն դժվարություններ է պատճառում մեզ:

РЦХИДНИ, ф.85, оп.23, д.106, лл.15-16  
Տպագրվում է ըստ՝ Большевицское  
руководство. Переписка. 1912-1927.  
М. РОССПЭН 1996. С. 245-246. Прим. N2

Հատված Աֆղանստանում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ  
Ֆ.Ֆ.Ռասսկոլնիկովի հեռագրից՝ ՌԽՖՍՀ արտաքին գործերի  
ժողկոմի տեղակալ Լ.Մ.Կարախանին

19 մարտի 1922թ.

Արևելյան Բուխարայից ժամանած մեր բարեկամների տեղեկությունների համաձայն՝ էնվերը եռանդուն կերպով իրականացնում է Արևելքում համընդհանուր ապստամբության նախապատրաստման ծրագիրը... Կովկասից մինչև Կասպիական [ծով]: Նրա գործունեության կենտրոնում Արևելյան Բուխարան, Ֆերգանան և Սամարղանդն են: Նրա կողմից մի շարք էմիսարներ են ուղարկված Խիվա և Թուրքեստանի բոլոր մարզերը: Նրա գործակալներին տրված են հրահանգներ՝ ներկայանալ որպես Խորհրդային Իշխանության ջերմեռանդ կողմնակիցներ, միաժամանակ տանելով ընդհատակյա աշխատանք մեր դեմ: Կան տեղեկություններ Մուհետդինի<sup>74</sup> Սամարղանդ և այստեղ ժամանելու մասին, որն էնվերի առաջադրանքով պետք է ներկայանա մեղայականով և պահանջի՝ Բուխարայում ստեղծել իսկական կոմունիստական կառավարություն: Արևելյան Բուխարայում և Ֆերգանայում կազմակերպչական աշխատանքն ավարտելուց հետո էնվերը մտադիր է սկզբում ապստամբություն բարձրացնել Թուրքեստանի որևէ կետում՝ հետագայում ընդլայնելով խռովության գոտին, գործողությունը սկսելու հետ միաժամանակ պարտիզանական հարձակումները պետք է ոչնչացնեն երկաթուղիները:

РЦХИДНИ, ф.558, оп.1, д.2304, л.1.  
Տպագրվում է ըստ՝ Большевицское  
руководство. Переписка. 1912-1927.  
М. РОССПЭН, 1996. с. 246. Прим. N2

Հատված ՌԿ(բ)Կ ԿԿ Թուրքեստանյան բյուրոյի անդամ,  
Թուրքեստանում Համառուսաստանյան Արտակարգ  
Հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչ Յա.Խ.Պետերսի  
նամակից՝ ուղղված ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամ և ԿԿ  
Գլխավոր քարտուղար Ի.Վ.Ստալինին

3 ապրիլի 1922թ.

...Բուխարայի կառավարության ճգնաժամը մոտեցել է իր  
հանգուցալուծմանը...

Վերջին ժամանակներում Բուխարայի իշխանության վերնախավի  
շուրջ մթնոլորտն արտակարգ խտացված է: /.../Բասմաչյան  
հրոսակախմբերը կանգնած էին գրեթե Բուխարայի մերձակայքում, իսկ  
Բուխարայում ազատ շրջում էին էնվեր Փաշայի բացահայտ  
գործակալները: /.../

Ես կարծում եմ, որ մենք մեծագույն սխալ ենք գործում՝ արտաքուստ  
ցույց տալով, թե մենք խախտում ենք Բուխարայի հանրապետության  
ինքնուրույնությունը և դրանով բնակչությանը տրամադրում ռուսների  
դեմ, առիթ ենք տալիս էնվերական արկածախնդրությանը, առավել ևս,  
որ, պահպանելով Բուխարայի արտաքին ինքնուրույնությունը, մենք  
լիակատար հնարավորություն ունենք ներքին և ընկերական ճնշման  
միջոցով անցկացնել ինչ որ ցանկանանք: /.../

РЦХИДНИ, ф.558, оп.1, д.2275, л.1.

Բնագիր: Մեքենագիր:

Տպագրվում է ըստ՝ Большевикское  
руководство. Переписка. 1912-1927.

М. РОССПЭН. 1996. С.243-244.

Հատված Բուխարայի ժողովրդական խորհրդային  
Հանրապետության ժողկոմխորհի նախագահ և արտաքին  
գործերի ժողկոմ, ՌԿ(Բ)Կ ԿԿ Միջինասիական բյուրոյի անդամ  
Ֆ.Խոջակի նամակից՝ ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողկոմի  
տեղակալ Լ.Մ.Կարախանին

5 ապրիլի 1922թ.

./.../Ներքին բասմաչյան շարժումն ակնհայտորեն աջակցություն է ստանում դրսից: Բուխարայի և Կերմենիցի վիլայեթներում բասմաչներին ղեկավարում էին էմիրական պաշտոնյաները և աֆղանցիները: Նկատվել է ներքին միաձուլվածություն և ընդհանուր կապ Բուխարայի վիլայեթի և Սամարղանդի երկրամասի բասմաչների միջև: Անկասկած, բասմաչյան շարժման ղեկավար կենտրոնն այժմ և հատկապես մոտ ապագայում լինելու է Արևելյան Բուխարան: ./.../ Ինչ վերաբերում է Արևելա-Բուխարական հարցին, ապա այնտեղ, ըստ ինձ մոտ եղած տեղեկությունների, դրությունն այսպիսին է. էնվեր Փաշան իր մարդկանց հետ գտնվում է Դուշանբեում: Մենք ստացել ենք տեղեկություններ այնտեղ մի քանի աֆղանցիների և Բուխարայի նախկին էմիրի ներկայացուցիչների ժամանման, ինչպես նաև այն մասին, որ նրանց միջև կայացել է խորհրդակցություն, որին մասնակցել են նաև Ֆերգանայի բասմաչները: Այժմ հաստատվում է, որ զինված ուժերը բաղկացած են երեք-չորս հազար մարդուց, իսկ մյուսները՝ մինչև տասներկու հազար, հասարակ ամբոխից են, տարբեր վայրերում: Ըստ մեր գործակալների հայտարարությունների, կան չորս հրոսակախմբեր՝ թվով մոտ 16.000 մարդ, և նրանցից ամենագլխավորները՝ թվով մինչև 4.000 մարդ, ղեկավարում է էնվեր Փաշան: ./.../ Կարելի է վստահությամբ ասել նաև այն մասին, որ Աֆղանստանը մասամբ կարողացել է միավորել բոլոր նախկինում սնանկացած ուժերը և զենք է մատակարարում բասմաչներին: Էնվերը հայտարարված է բասմաչների զորքերի գլխավոր հրամանատար: Նրա կողմից պատվիրակություն է ուղարկված Աֆղանստան, և, կարծես թե, նրանց այնտեղ ընդունել են: Բուխարայի նախկին էմիրի դերի նկատ-

մամբ վերաբերմունքը լավ է: Դա են ապացուցում Արևելյան Բուխարայի տարբեր ցեղերի պարագլուխներին ուղղված՝ նախկին էմիրի մեր կողմից բռնագրաված նամակները, որոնք բացահայտում են էնվերի շարժման էությունը Արևելյան Բուխարայում: /.../

РЦХИДНИ, ф.558, оп.1, д.2280, лл.4-8.

Տպագրվում է ըստ՝ Большевикское  
руководство. Переписка. 1912-1927.

М. РОССПЭН. 1996. С.252-253. Прим. N2

Հատված ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ  
 Լ.Ս.Կարախանի պաշտոնական գրությունից՝ ուղղված  
 ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոյին և ՌԿ(Բ)Կ գլխավոր քարտուղար  
 Ի.Վ.Ստալինին

25 ապրիլի 1922թ.

/..../Ծիշտ այնպես, ինչպես բասմաչությունը Ֆերգանայում  
 հնարավոր չէ վերագրել իրեն աջակցող ինչ-որ արտաքին թշնամիների,  
 այնպես էլ՝ շարժումն Արևելյան Բուխարայում չի կարելի վերագրել  
 Աֆղանստանից նրան ցուցաբերվող աջակցությանը: Մինչև այժմ, բացի  
 ընդհանուր ցուցումներից, մենք այդ աջակցության [վերաբերյալ] ոչ մի  
 կոնկրետ փաստ չենք ունեցել: Ես կասկած չունեմ, որ ենվերն աջակ-  
 ցություն ունի Աֆղանստանից, սակայն այդ աջակցությունը մեծ չէ, և  
 միակ հենարանը չէ: Այդ են վկայում բոլոր տեղեկությունները և, ի միջի  
 այլոց, Բուխ[արական] էմիրի և բասմաչների պարագլուխների միջև  
 նամակագրությունը, որը վերջերս բռնագրավվել է մեր կողմից<sup>75</sup>:

РЦХИДНИ, ф.5, оп.2, д.209, лл.14-16.

Բնագիր: Մեքենագիր:

Տպագրվում է ըստ՝ Большевистское  
 руководство. Переписка. 1912-1927.

М. РОССПЭН, 1996. С. 249.

№ 28

Հատված Գ.Կ.Օրջոնիկիծեի" և Շ.Ձ.Էլիավայի<sup>76</sup>  
հեռագրից Ի.Վ Ստալինին

12 մայիսի 1922թ.

Տաշքենդ

Դրությունը Բուխարայում կարելի է բնութագրել որպես գրեթե համընդհանուր ապստամբություն Արևելյան Բուխարայում. այստեղի տվյալներով, այն կազմակերպված բնույթ է ստանում էնվերի ղեկավարությամբ: (...)Դրությունը փրկելու համար անհրաժեշտ է անհապաղ վերացնել էնվերին, ինչը և նախապատրաստվում է:

РЦХИДНИ, ф.2, оп.1, д.23181, л.1.  
վավերացված պատճեն: Մեքենագիր:

№ 29

Հատված Ի.Վ.Ստալինի պատասխան հեռագրից՝  
ուղարկված Տաշքենդ՝ Գ.Կ.Օրջոնիկիծեին

14 մայիսի 1922թ.

/.../Կենտկոմի պատասխանը կարող եմ հաղորդել միայն վաղը, այսօր հնարավորություն չկա գումարել Կենտկոմ: Հաղորդում եմ առայժմ իմ անձնական կարծիքը Բուխարայի վերաբերյալ: Էլիավան իրավացի չէ. եթե պատերազմը սկսված է, օկուպացիան անխուսափելի է. որքան շուտ, այնքան լավ, հարցը կարող է գնալ օկուպացիայի սոսկ այս կամ այն ձևերի մասին: Հասկանալի է, որ օկուպացիայի հետ միաժամանակ անհրաժեշտ է երկարատև քաղաքական պայքար [ծավալել] ազգային, կրոնական գիջումների և փրկագնված հողերի վերադարձման դիրքերից: Համապատասխան կարգադրություն է տրված ԿԿ-ի կողմից մոտ երեք ամիս առաջ. ինչպես բուխարացիներին, այնպես էլ՝

թուրքեստանցիներին: Մուհետդինովը<sup>74</sup> վտանգավոր է, նա աֆղանական կողմնորոշման գլխավոր մեղսակիրն է: Ազգային-դեմոկրատական կառավարությունն առանց միջակ գյուղացի-դեհկանների՝ կա՛մ բարբառանք է, կա՛մ էմիրի վերականգնումը: Խորհուրդ եմ տալիս չդատել բուխարական գործերի մասին առանց Խոջաևի<sup>77</sup>, թուրքեստանցիները մինչ այժմ անաչառություն չեն դրսևորել բուխարացիների հանդեպ: Լավ կլիներ՝ Տաշքենդ կանչել Խոջաևին և ուրիշներին, հանգամանալից խոսել նրանց հետ և դրանից հետո հաղորդել մեզ ձեր եզրակացությունը: Դու ճիշտ ես Բուխարայում և Թուրքեստանի ծախս կոմունիզմի վերաբերյալ: Սաֆարովին<sup>27</sup> հետ կանչելով, մենք նկատի ունեինք թուլացնել ծախս կոմունիստներին, ովքեր անցկացնում են բռնի շերտավորում. պարզ է, որ նրանց պետք է վերջնականապես ջախջախել: Բուխարական ծախսերին ցրել է պետք, սակայն պետք է քշել նաև Մուհետդինովին<sup>74</sup>, որի կողմնակիցները էնվերի գործակալներն են:

РЦХИДНИ, ф.558, оп.1, д.2329, лл.1-2.

Չեռագիր:

Տպագրվում է ըստ՝ Большевицское  
руководство. Переписка. 1912-1927.

М. РОССПЭН, 1996. С.251-252, док. N155.

№ 30

Քաղվածք ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի նիստի №7  
արձանագրությունից

18 մայիսի 1922թ.

Ներկա են՝ ՔԲ անդամներ Լենինը, Տրոցկին<sup>19</sup>, Ջինովևը<sup>78</sup>,  
Ստալինը<sup>5</sup>, Կամենևը<sup>4</sup>, Տոմսկին<sup>6</sup>, Ռիկովը<sup>79</sup>,

ՔԲ անդամության թեկնածուներ Մոլոտովը<sup>48</sup>, Կալինինը<sup>9</sup>,  
ԿԿ անդամ Սոկոլնիկովը<sup>26</sup>,

խորհրդակցական ծայնով՝ Յյուրուպան<sup>80</sup>:

10. Թուրքեստան-Բուխարական գործերի մասին

(ընկ. Ստալին):

Ընդունել ընկ. Ստալինի առաջարկությունը (տես՝ հավելվածը):

ՀԱՎԵԼՎԱԾ

N.10 կետի առնչությամբ

...2. Խորհրդային իշխանության և նրա կողմից բասմաչների դեմ սկսած ռազմական գործողությունների օգտին ժողովրդական լայն զանգվածների տրամադրության մեջ շրջադարձ առաջացնելու նպատակով, հանձնարարել Միջին-Ասիական բյուրոյին<sup>61</sup> և բոլոր երեք ազգային ԿԿ-ներին Խորհրդային մարմինների հետ համատեղ կազմակերպել լայն քաղաքական կամպանիա (հանրահավաքներ, անկուսակցական կոնֆերանսներ) էնվերի դեմ՝ հանուն Խորհրդային Իշխանության, որի համար.

ա) էնվերին հայտարարել Անգլիայի գործակալ և Արևելքի ժողովուրդների թշնամի.

բ) Թուրքեստանը, Բուխարան և Խիվան մաքրել հակախորհրդային թուրք-աֆղանական տարրերից...

...12. Պարտավորեցնել Միջին-Ասիական բյուրոյին շաբաթը մեկ ԿԿ-ին<sup>62</sup> տեղեկացնել Թուրքեստանում և Բուխարայում Խորհրդային և կուսակցական մարմինների կողմից ձեռնարկվող միջոցառումների մասին՝ ի կատարումն սույն որոշման:

РЦХИДНИ, ф.17, оп.3, д.293, лл.3, 9-10

Վավերացված պատճեն: Մեքենագիր:

№ 31

Հատված ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամ և ԿԿ  
Գլխավոր քարտուղար Ի.Վ.Ստալինի հեռագրից,  
ուղարկված Տաշքենդ՝ Գ.Կ.Օրջոնիկիձեին

19 մայիսի 1922թ.

Երրորդ՝ ժողովրդական խորհուրդների համակարգին կարելի կլիներ  
անցնել բասմաչների դեմ ռազմական լուրջ հաջողություններից հետո  
միայն, ոչ մի դեպքում դրանից շուտ, հակառակ դեպքում ժողովրդական  
խորհուրդներ մուտք կգործեն էնվերի գործակալները:

РЦХИДНИ, ф.558, оп.1, д.2338, л.1 и об.

Վերծանված հեռագիր.

Հրապարակվում է առաջին անգամ:

Քաղվածք ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի նիստի N. 22  
արձանագրությունից

17 օգոստոսի 1922թ.

Ներկա են՝ ՔԲ անդամներ Կամենևը<sup>4</sup>, Տրոցկին<sup>19</sup>, Ստալինը<sup>5</sup>,  
Ռիկովը<sup>79</sup>, Կալինինը<sup>8</sup> (թեկնածու),

ԿԿ անդամներ Ռակովսկին<sup>83</sup>, Յարովսլավսկին<sup>84</sup>,  
Ռուժոտակը<sup>85</sup>, Կույբիշևը<sup>86</sup>, Ռադեկը<sup>42</sup>։

Ց.Ջեմալի և դաշնակների<sup>87</sup> մասին (ընկ.-ներ Ստալին,  
Կարախան<sup>88</sup>):

Հանձնարարել ընկ. Ռադեկին կազմել կառավարական  
հաղորդագրության<sup>89</sup> նախագիծ՝ մատնանշելով, որ սպանությունը  
կատարվել է դաշնակների կողմից (ըստ երևույթին, անգլիական  
իմպերիալիզմի գործակալների դրոմամբ), և որ մեղավորները  
առաջիկայում դատի կտրվեն: Տեքստը համաձայնեցնել Ստալինի հետ:

РЦХИДНИ, ф.17, оп.3, д.308, л.3  
Վավերացված պատճեն: Մեքենագիր:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Ներածություն

1. Առ այսօր գրականության մեջ այդ ժամանակի ռուս-թուրքական հարաբերությունների մասին խոսելիս նկատի են առնվում սոսկ խրոհրդաքննալական հարաբերությունները: Սակայն, ինչպես վկայում են հրապարակվող փաստաթղթերը, այդ տարիներին բուշկիկները կապեր էին պահպանում ոչ միայն քննալականների, այլև թուրքական ոչ քննալական ուժերի հետ: Հետևապես, սխալ կլիներ այն տարիների խորհրդաքննալական հարաբերությունները նույնացնել առհասարակ ռուս-թուրքական հարաբերություններ հասկացության հետ. առաջինը երկրորդի սոսկ մի մասն է կազմում:
2. Архив внешней политики Российской Федерации МИД России (այսուհետև՝ АВП РФ), ф.132, оп.3, п.2, д.1, л.11 (մեջբերվում է ըստ «Международная жизнь» ամս., М., 1963, N11, с. 147-148: Չրապարակումը՝ Գ.Ս.Շիշմարյովայի):
3. Российский центр хранения и изучения документов новейшей истории (այնուհետև՝ РЦХИДНИ), ф.64, оп.1, д.21, л.145: Տե՛ս նաև նույն տեղում, ր.121<sup>6</sup>:
4. Նույն տեղում, ր.145:
5. Նույն տեղում, ր.126, 145:
6. Նույն տեղում, ր.126:
7. Ինչպես պարզվում է այն ժամանակի բազմաթիվ փաստաթղթերից, Ռուսաստանի ռազմական և նյութական օգնությունը Թուրքիային, ի տարբերություն շատ հեղինակների պնդման, խիստ սահմանափակ բնույթ էր կրում:
8. Документы внешней политики СССР. т. IX, М., 1964, с.116: Նույնը Չիչերինը հայտարարեց նաև Ու(Բ)Կ XIV համագումարում (1925թ.) արտասանած ճառում, որն առաջին անգամ տպագրվել է 1991թ. («Кентавр» ամս., М., 1991, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 123):
9. РЦХИДНИ, ф.558, оп.2, д.82, лл.1, 2:
10. РЦХИДНИ, ф.5, оп., д.2059, л. 15:
11. РЦХИДНИ, ф.2, оп.2, д.612, л.5:
12. РЦХИДНИ, ф.5, оп.2, д.315, л.38:

13. Ջենալ փաշա (1872-1922) – թուրք խոշոր քաղաքական գործիչ: Թուրքական «Միություն և առաջադիմություն» ազգայնական կուսակցության անդամ: Պանիսլամիզմի և պանթյուրքիզմի մոլի պաշտպան: Առաջին աշխարհամարտի տարիներին եղել է Թուրքիայի ռազմածովային նախարարը: Միրիայում, Լիբանանում և Պաղեստինում արաբների ազգային-ազատագրական շարժման ճնշման և Թուրքիայում հայերի 1915թ. ցեղասպանության կազմակերպիչներից և ղեկավարներից մեկն էր:
14. Թալեթ փաշա (1874-1921) – թուրք խոշոր քաղաքական գործիչ: Թուրքական «Միություն և առաջադիմություն» ազգայնական կուսակցության ԿԿ նախագահ: Օսմանյան Թուրքիայի ոչ թուրք ժողովուրդների թրքացման քաղաքականության գլխավոր ոգեշնչողներից մեկը: Երկար տարիներ եղել է Թուրքիայի ներքին գործերի նախարար: Թուրքիայում հայերի 1915թ. ցեղասպանության գլխավոր կազմակերպիչը:
15. Էնվեր փաշա (1881-1922) – թուրք խոշոր քաղաքական գործիչ: Թուրքական «Միություն և առաջադիմություն» ազգայնական կուսակցության անդամ: Թուրքիայի ռազմական նախարար, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ: Առաջին աշխարհամարտի մեջ Թուրքիայի ներգրավման գլխավոր նախաձեռնողներից: Թուրքիայում հայերի 1915թ. ցեղասպանության կազմակերպիչներից և ղեկավարներից մեկը:
16. Կ.Ուդեկ. Ջեկուցում Կոմունիստական Ինտերնացիոնալի IV կոնգրեսում (1922թ.): Տե՛ս Կարլ Րադեկ, Пять лет коминтерна. Е.П. М., 1924, с.209-210.
17. Խալիլ փաշա (1882-1957) – թուրք հայտնի ռազմական գործիչ, գեներալ Էնվեր փաշայի հորեղբայրը: Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական 6-րդ բանակի հրամանատար: «Մեծ Թուրանի» ստեղծման գաղափարի մոլի կողմնակիցներից: 1918թ. սեպտեմբերին մասնակցել է թուրքական զորքերի կողմից Բաքվի գրավմանը:
18. Նուրի փաշա (1877-1939) – թուրք հայտնի քաղաքական գործիչ, օսմանիզմի, պանիսլամիզմի և պանթյուրքիզմի գաղափարախոս: Էնվերի եղբայրը:
19. РЦХИДНИ, ф.85, оп.13, д.3, лл.1-3:
20. АВП РФ, ф.04, оп.51, п.321, д.54875, л.39:
21. РЦХИДНИ, ф.2, оп.2, д.386, л.1:
22. РЦХИДНИ, ф.2, оп.2, д.612, л.5:
23. РЦХИДНИ, ф.2, оп.2, д.950, л.1, ф.5, оп.2, д.208, лл.7-8:

24. РЦХИДНИ, ф.5, оп.1, д.2059, л.16: 1921 թ. փետրվարի 28-ի խորհրդա-  
աֆղանական պայմանագրի տեքստը տե՛ս' Документы внешней политики СССР.  
т. III, М. 1959, с.550-553 :

25. РЦХИДНИ, ф.2, оп.2, д.612, л.5:

26. РЦХИДНИ, ф.2, оп.2, д.950, л.1, ф.558, оп.2, д.51, л.1:

27. РЦХИДНИ, ф.2, оп.2, д.612, л.5:

28. РЦХИДНИ, ф.17, оп.3, д.154, лл.2, 3:

29. РЦХИДНИ, ф.17, оп.3, д.64, л.1:

30. РЦХИДНИ, ф.5, оп.1, д.2054, л.5:

31. РЦХИДНИ, ф.17, оп.3, д.86; л- 4:

32. РЦХИДНИ, ф.2, оп.2, д.312, лл.2-3:

33. РЦХИДНИ, ф.17, оп.3, д.78, л.2:

34. РЦХИДНИ, ф.2, оп.2, д.386, л.1:

35. РЦХИДНИ, ф.2, оп.2, д.950, л.1:

36. Նույն տեղում:

37. Նույն տեղում, ք.1-ի մյուս երեսը:

38. РЦХИДНИ, ф.85, оп.13, д.3, лл.1-3:

39. РЦХИДНИ, ф.64, оп.1, д.25, лл.247-248:

40. Գեղինակի անձնական արխիվ, Ե.Ղ.Ստասովայի 1957թ. հոկտեմբերի 10-ի  
նամակը Ռ.Վ.Ղազանջյանին:

41. 1-й съезд народов Востока, Баку, 1-8 сентября 1920г. Пр., 1920, с. 117 :

42. Նույն տեղում, էջ 148:

43. Նույն տեղում:

44. АВП РФ, ф.0148, оп.4, п.4, д.23, л.71:

45. РЦХИДНИ, ф.17, оп.3, д.293, лл.9-10:

46. РЦХИДНИ, ф.2, оп.1, д.23181, л.1:

47. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակների թուրքական  
եռապետության անդամներից Ջեմալ փաշան սպանվել է 1922թ. հուլիսին Թիֆլիսում  
(Թբիլիսի) հայ վրիժառուների կողմից: Թալեսթ փաշան (խորհրդային Ռուսաս-  
տանում չի եղել, սակայն ռուսաստանյան բուլշևիկների հետ ինչ-որ կապեր ունեցել  
է) սպանվել է 1921թ. մարտին Բեռլինում հայ վրիժառու Սողոմոն Թեխլերյանի  
կողմից: Ենվեր փաշան սպանվել է 1922թ. օգոստոսին քասմաչների դեմ կարմիր  
Բանակի գործողությունների ժամանակ: Խալիլ փաշան հեռացել է Ռուսաստանից

*հանր. արխիվ*

1921թ.: Վերը նշված Նուրի փաշան Ուսաստան չի եկել և եռանդուն պայքար է մղել խորհրդային իշխանության դեմ:

Երիտթուրքերի հետ բուլղարիկների կապերի մասին տե՛ս նաև՝ Գ.Ա.Ավետիսյան. Էնվեր փաշայի Բաքվում գտնվելու հարցի շուրջ, «Ավանգարդ», Երևան, 1989, 23 օգոստոսի: Նույնի, Գայկական հարցը 1918 թվականին. Երևան, 1998. Բ.Գ.Саакян. Критерий-объективность, “Голос Армении”, Ереван, 1991, 29 марта: Նույնի, Բուլղարիկները և Էնվեր փաշան, ԳԳ ՉԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1991, №6, էջ 3-7: Ռ.Լ.Խուրշուդյան. Եղեռնը և բուլղարացիները. «Գայոց ցեղասպանություն. Պատճառներ և դասեր». Մաս 3, Երևան, Ազգային հարցի և զենցողիի ուսումնասիրության կենտրոն, 1995, էջ 32-35:

### Փաստաթղթեր

1. Նամակը գրվել է գործակալական ճանապարհով ստացված Մուսուլմանական աստվածաբանական ակադեմիաների ԿԿ 1920թ. փետրվարի 19-ի Գայտարարության (Կոստանդնուպոլիս) կապակցությամբ, որի տեքստը կցված էր Չիչերինի նամակին: Նամակի պատճենները ուղարկվել են նաև ՌԿ(Բ)Կ ԿԿ Զաղրբյուրոյի անդամ և քարտուղար Ն.Ն.Կրեստինսկուն, ՌԿ(Բ)Կ ԿԿ քարտուղար Ե.Դ.Ստասովային և ՌուՖՍԳ ազգությունների գործերով ժողովրդական կոմիսարիատի պատասխանատու աշխատակից Ն.Նարիմանովին: Նույն տարվա մարտի 2-ին ՌԿ(Բ)Կ ԿԿ Զաղրբյուրոն, որի աշխատանքին մասնակցում էին Վ.Ի.Լենինը, Լ.Բ.Կամենևը, Ն.Ն.Կրեստինսկին, Կ.Բ.Ռադեկը, Մ.Պ.Տոմսկին և ուրիշներ, քննության առնելով «ընկ. Չիչերինի նամակը պանիսլամիստների կոստանդնուպոլսյան առնելով «ընկ. Չիչերինի նամակը ի գիտություն» Գ.Վ.Չիչերինի նամակը և դրա տեքստը «հաղորդել ընկ. Ստալինին կոնկրետ դիրեկտիվներ մշակելու համար» (ՐՄԽԻԴՈՒ, ֆ.17, օպ.3, ձ.64, լ.1): Պանիսլամիզմի նկատմամբ բուլղարիկների բացասական դիրքորոշման մասին տե՛ս նաև՝ Վ.Ի.Լենին. «Թեզիսների նախնական ուրվագիծ՝ ազգային և գաղութային հարցերի վերաբերյալ» (Վ.Ի.Լենին. Երկերի լիակատար ժողովածու, հ.41), ինչպես նաև հ.3 փաստաթուղթը:

Ստորև բերում ենք Մուսուլմանական աստվածաբանական ակադեմիաների ԿԿ Գայտարարության լրիվ տեքստը, որը տպագրվում է առաջին անգամ.

«Ժողովուրդների ճակատագիրը տնօրինող պետական մարդկանց ուշադրությունը ներկայումս ամենից առավել զբաղված է բուլղարիկյան հարցով: Իսլամը, որի

պարտականությունն է ուղղություն տալ մարդկային ցեղի նշանակալից մասի հայացքներին և արտացոլել նրա զգացմունքները, պետք է ազդարարի, թե ինչպիսի՞նք է բոլշևիզմի վերաբերմունքը մուսուլմանների և առհասարակ աշխարհի հանդեպ, լա՞վն են թե՛ ոչ այն սկզբունքները, որոնց վրա է հիմնվում բոլշևիզմը: Այն փաստը, որ դրանց կիրառությունը չարիք է բերում մարդկությանը հասարակական առունձով, առանձին մարդկանց կյանքին և սեփականության իրավունքներին, անհնարին է դարձնում բոլշևիզմի սկզբունքների համակերպումն Իսլամի սկզբունքների հետ: Իսլամը պահանջում է երջանկություն, հանդարտություն և ընդհանուր առաջադիմություն: Իսլամն այդ պատճառով արգելում է խլել ուրիշների կյանքն ու սեփականությունը և ամենակտրուկ կերպով երաշխավորում է անհատի և կոլեկտիվների իրավունքները: Ուստի Իսլամի գերիշխող սկզբունքներից մեկն այն է, որ յուրաքանչյուր անհատ պետք է իրավունք ունենա տնօրինելու իր սեփականությունը՝ թե՛ իր կյանքի օրոք, և թե՛ կտակի միջոցով իր մահից հետո: Իսլամի վերաբերմունքը կարելի է ամփոփել հետևյալ կերպ՝ Մուսուլմանական կրոնը շահագրգռված է, և նրա ուժն ու ազդեցությունը մարմնավորող խալիֆաթը հասարակական պարտավորություն է կրում՝ դիմադրել բոլշևիզմին՝ որպես մի վտանգի, որը սպառնում է քաղաքականությանը, արդարությանը և իրավունքին»:

(РЦХИДНИ, ф.5, оп.1, д.2054, л.6; оп.2, д.314, л.3):

2. Խոսքը ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրամասային Կոմիտեի մասին է:

3. Այստեղ և ստորև ՌԿ(բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի նիստերին մասնակցող անձանց թվարկումը տրվում է արձանագրությունների համաձայն:

4. Կամենն (Ռոզենֆելդ) Լև Բորիսովիչ (1883-1936) – ՌԿ(բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի անդամ, Մոսկվայի խորհրդի նախագահ, ՌուՖՍՄ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ:

5. Ստալին (Ջուղաշվիլի) Իոսիֆ Վիսարիոնովիչ (1879-1953) – ՌԿ(բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի և Ռուսաստանի Յեղազմխորհրդի անդամ, ՌուՖՍՄ ազգությունների գործերով ժողկոմ, 1922թ. ապրիլից՝ ՌԿ(բ)Կ ԿԿ Գլխավոր քարտուղար:

6. Տոմսկի (Եֆրեմով) Միխայիլ Պավլովիչ (1880-1936) – ՌԿ(բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի և Կազմբյուրոյի անդամ, Արհմիությունների նախագահ:

7. Պրեոբրաժենսկի Եվգենի Ալեքսեևիչ (1886-1937) – 1920-1921թթ. եղել է ՌԿ(բ)Կ ԿԿ Կազմբյուրոյի անդամ և ԿԿ քարտուղար:

8. Կալինին Միխայիլ Իվանովիչ (1875-1946) – ՌԿ(բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի անդամության թեկնածու, Յամառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի

(ՅԿԳԿ) նախագահ:

9. Կենսագրական տվյալները հալիլ փաշայի մասին տե՛ս Լեւոնաթոյան N17 ծանոթ.:

10. Գ.Վ.Չիչերիմի նամակը տվյալ հարցի վերաբերյալ չի հայտնաբերված:

11. Օրջոնիկիձե Գեորգի (Սերգո) Կոնստանտինովիչ (1886-1937) – ՈԿ(Բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի ղեկավար, Կովկասյան ճակատի Շեղոազմխորիդի անդամ: 1922թ. ապրիլին Կենտրոնի կողմից հատուկ առաջադրանքով ուղարկվել էր Միջին Ասիա:

12. Վ.Ի.Լենինի կողմից հալիլ փաշայի ընդունելությունը տեղի չի ունեցել:

13. Թեգիսները գրվել են ՈԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի 1920թ. հունիսի 8-ի որոշման համաձայն. «Չանձնարարել ընկ. Չիչերիմին՝ կազմել Արևելքում աշխատող կոմունիստներին ուղղված հրահանգի նախագիծը՝ հատկապես ուշադրություն հատկացնելով այնտեղ բորբոքվող հեղափոխությանը: Մշակումն ավարտելուց հետո նախագիծը հանձնել III Ինտերնացիոնալի 2-րդ կոնգրեսի համար ազգային հարցի վերաբերյալ թեգիսների մշակման՝ ընկ. Լենինի գլխավորած հանձնաժողովին (ՐԼԽՊԴՄԻ, ֆ.17, օտ.3, ձ.86, ձ.4):

Եւսկ տարվա հունիսի 14-ին ՈԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյին ուղղված կից նամակում Չիչերինը գրում է. «Արևելք մեկնող ընկերներին ուղղված հրահանգները կարելի է կազմել առանձին երկրների համար միայն, այլ ո՛չ Արևելքի համար առհասարակ: Սենք այժմ մշակում ենք հրահանգ Չնդկաստանի համար: Արևելքի համար առհասարակ, ի կատարումն Զաղբյուրոյի հանձնարարության, ես կարող էի կազմել սոսկ ընդհանուր թեգիսներ, որոնք դեռևս կարող են քննարկման ենթակա լինել և չեն հավակնում վերջնական բնույթ կրելու՝ նկատի ունենալով շոշափված հարցերի անբավարար մշակվածությունը»: (ՐԼԽՊԴՄԻ, ֆ.2, օտ.2, ձ.312, ձ.1):

14. Ամսաթիվը սահմանված է կից գրության հիման վրա:

15. Երկտողը գրված է Ռուսաստանի Շեղոազմխորիդի նախագահ Լ.Ղ.Տրոցկու անունով՝ Արևմտյան ճակատի Շեղոազմխորիդի անդամ Ի.Ս.Ունշլիխտի 1920թ. օգոստոսի 18-ին Մինսկից ուղարկած գաղտնի հեռագրի վավերացված պատճենի վրա. «Թյուրինգենից (Գերմանիա) ժամանել է առևտրական գործակալ և առաջարկում է շուտափույթ կերպով Գրանվո հասցնել 50.000 գերմանական հրացան, 15.000 բրաունինգ, 250 «Պարաբելում» ատրճանակ, 10.000.000 հրացանային փամփուշտ և այլ զինվորական գույք, որի համար կպահանջվի 27.000.000 մարկ: Եթե դուք սկզբունքորեն համաձայն եք... (այսպես է տեքստում–

Ո.Ղ.) Կոպպի կամ Գուկովսկու միջոցով դրամանիշներ վճարելու համար: Սպասում են ձեր շտապ պատասխանին»:

Չեռագրի վրա կա Լ.Ղ.Տրոցկու մակագրությունը. «ԸՆկ.-ներ Կրեստինսկուն, Լեժովային, Ռիկովին, Լենինին: Անհրաժեշտ է անհապաղ կատարել»: (ՐԸՄԻԴՈՒ, փ.2, օտ.2, Ժ.386, յ.1):

16. Ամսաթիվը սահմանված է ըստ հեռագրի պատճենի վրա եղած նշումի՝ «20/8 20»:

17. Այստեղ և ստորև փաստաթղթի վրա ընդգծումներն արված են Վ.Ի.Լենինի կողմից:

18. Տրոցկի (Բրոնշտեյն) Լև (Լեյբա) Դավիդովիչ (1879-1940) – ՌԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի անդամ, Ռուսաստանի Չեղոազմիտրիդի մախսագահ, զինվորական և ծովային գործերով ժողկոմ, ՌԽՖՍՀ Չաղորդակցության ճանապարհների ժողկոմ:

19. Դրանից մեկ շաբաթ առաջ՝ 1920թ. օգոստոսի 13-ին ՌԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոն, քննելով Լ.Ղ.Տրոցկու առաջարկությունը Գերմանիայից զինամթերք ստանալու համար միջոցներ ձեռնարկելու մասին, որոշեց. «Առաջարկել Արտաքին առևտրի ժողկոմատին, Չաղորդակցության ճանապարհների ժողկոմատին և մյուս գերատեսչություններին՝ միջոցներ ձեռնարկել Գերմանիայի հետ երկաթգծերի կցորդում իրականացնելու համար՝ այնտեղից զենք ստանալու նպատակով»: (ՐԸՄԻԴՈՒ, փ.17, օտ.3, Ժ.102, յ.2):

20. Կենսագրական տվյալները Ջեմալ փաշայի մասին տե՛ս Ներածության N13 ծանոթ.:

21. Այս հարցի վերաբերյալ տե՛ս նաև հ.հ. 22-28 փաստաթղթերը:

22. Մուստաֆա Էեմալ փաշա, Աթաթուրք (1881-1938) – Թուրքիայի պետական, քաղաքական և ռազմական գործիչ, նոր Թուրքիայի առաջին նախագահը (1923-1938): 1919-1920թթ. գլխավորել է Թուրքիայի ազատագրական շարժումը, որն իր ղեկավարի անվամբ կոչվել է «քեմալական»: 1920-1922թթ. եղել է Թուրքիայի Մեծ Ազգային ժողովի (պառլամենտի) և կառավարության նախագահ:

23. Խոսքը Չամառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և ՌԽՖՍՀ ժողկոմիտրիի Թուրքեստանյան հանձնաժողովի մասին է, որը գործում էր Թուրքեստանյան Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Չանրապետության տարածքում 1919թ. հոկտեմբերից մինչև 1922թ. օգոստոսը՝ որպես վերջինիս բարձրագույն պետական մարմին:

24. Կրեստինսկի Լիկոլայ Լիկոլաևիչ (1883-1938) – ՌԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի անդամ

և ԿԿ քարտուղար:

25. Բուխարին Նիկոլայ Իվանովիչ (1888-1938) – ՈԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի անդամության թեկնածու:
26. Սոկոլնիկով Գրիգորի Յակովլևիչ (1888-1939) – Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և ՈւՖՍՀ Ժողովմխոբի Թուրքեստանյան հանձնաժողովի նախագահ, 1921թ-ից՝ ՈւՖՍՀ Ֆինանսների ժողովմի տեղակալ, ապա՝ ժողկոմ:
27. Սաֆարով Գ.Ի. (1891-1942) – ՈԿ(Բ)Կ ԿԿ Թուրքեստանյան բյուրոյի անդամ, 1921թ. դեկտեմբերից՝ III (Կոմունիստական) Ինտերնացիոնալի Արևելյան բաժնի վարիչ, նրա Գործադիր Կոմիտեի քարտուղար և նախագահության անդամ:
28. Տվյալ հարցի վերաբերյալ տե՛ս նաև հ.հ. 8, ~~14-16, 18~~ <sup>15-17, 19</sup> փաստաթղթերը:
29. Լուկին Միխայիլ Ֆեոդորովիչ (1892-1970) – պատասխանատու զինվորական աշխատող, հետագայում՝ գեներալ-լեյտենանտ:
30. Ամսաթիվը սահմանված է փաստաթղթի բովանդակության և արձանագրությունների հիման վրա (РЦХИДНИ, ֆ.544, օռ.2, ձ.1, 2 և այլն):
31. Խոսքը 1920թ. սեպտեմբերի 1-8-ը III (Կոմունիստական) Ինտերնացիոնալի կողմից Բաքվում գումարված՝ Արևելքի ժողովուրդների Առաջին Համագումարի մասին է:
32. Խոսքը 1918թ. հոկտեմբերին լուծարված երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կառավարող քաղաքական կազմակերպության ղեկավարների Կոստանդնուպոլսում (այժմ՝ Ստամբուլ, Թուրքիա) կայացած դատավարության մասին է, որը 1919թ. հեռակա կարգով մահվան դատապարտեց կուսակցության առաջնորդներին՝ թուրքական կառավարող եռյակի անդամներ Ջեմալ փաշային, Թալեաթ փաշային և Էնվեր փաշային՝ երկիրն առաջին աշխարհամարտի մեջ ներգրավման, Թուրքիայում 1915թ. հայերի տեղահանման համար:
33. Խոսքը 1921թ. փետրվար-մարտ ամիսներին նախատեսվող քեմալական Թուրքիայի լոնդոնյան բանակցությունների մասին է՝ Անտանտի հետ բարեկամական և դաշնակցային հարաբերություններ հաստատելու նպատակով:
34. Տվյալ հարցի վերաբերյալ որոշում չի կայացվել:
35. Տվյալ նամակը դրվել է ՈԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի 1921թ. ապրիլի 23-ի որոշման 12-րդ կետի հիմքում (տե՛ս հ.12 փաստաթուղթը):
36. Էնվերի զեկուցագիրը չի հայտնաբերվել:
37. Տվյալ նամակը և հ.11 փաստաթուղթը դրվել են ՈԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի 1921թ.

ապրիլի 23-ի որոշման 7-րդ կետի հիմքում (տե՛ս հ.12 փաստաթուղթը):

38. Ե.-ի անձը պարզել չի հաջողվել:

39. Տվյալ նամակը և հ.10 փաստաթուղթը դրվել են ՌԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի 1921թ.

ապրիլի 23-ի որոշման 7-րդ կետի հիմքում (տե՛ս հ.12 փաստաթուղթը):

40. Տվյալ հարցի վերաբերյալ տե՛ս նաև հ.հ.9-11 փաստաթղթերը:

41. Մոլոտով (Սկրյաբին) Վյաչեսլավ Միխայլովիչ (1890-1986)–ՌԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի անդամության թեկնածու, Կազմբյուրոյի անդամ և ԿԿ քարտուղար:

42. Ռադեկ (Սոբելսոն) Կառլ Բեռնգարդովիչ (1885-1939) – Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմի քարտուղար, ՌԿ(Բ)Կ ԿԿ անդամ:

43. Սոլց Արոն Ալեքսանդրովիչ (1872-1945) – ՌԿ(Բ)Կ Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի նախագահության անդամ:

44. Տե՛ս հ.38 ծանոթագրությունը:

45. Մեզ հայտնի չէ՝ ցուցաբերվել է, արդյոք, ֆինանսական օգնություն ենվերին և Ե.-ին վերը նշված նպատակների համար:

46. Թուրքերեն լեզվով թերթեր Ռուսաստանում չեն հրատարակվել:

47. Ըստ երևույթին, հարցի քննարկման ժամանակ Ի.Վ.Ստալինը ներկա չի եղել Զաղբյուրոյի նիստին: Ինչպիսին է եղել նրա դիրքորոշումը Զաղբյուրոյի որոշման նկատմամբ, մեզ հայտնի չէ (տե՛ս նաև հ.45 ծանոթագրությունը):

48. Ծրարի վրա Վ.Ի.Լենինի ձեռքով գրված է. «Յուլցմանից», «կարդացի 22/IX»:

49. Ըստ երևույթին՝ խոսքն արհմիութենական ակտիվիստ Ա.Ջ.Յուլցմանի մասին է:

50. Որքանով է հավաստի տվյալ վարկածը պարզել չհաջողվեց:

51. Մուսուլմանական կրոնական տոն:

52. Տե՛ս նաև հ.8 փաստաթուղթը:

53. Չնայած Գ.Վ.Չիչերինի թախանձագին խնդրանքին և խորհուրդներին՝ Վ.Ի.Լենինը կտրականապես հրաժարվեց ընդունել Ջեմալ փաշային (տե՛ս նաև հ.16 փաստաթուղթը):

54. Հայցվող օգնությունը ցույց չի տրվել:

55. Երկտողը գրված է Վ.Ի.Լենինին ուղղված՝ Գ.Վ.Չիչերինի 1921թ. հոկտեմբերի 14-ի նամակի հակառակ էջում (տե՛ս հ.15 փաստաթուղթը):

56. Բաց է թողնված փաստաթղթի այն մասը, որտեղ խոսվում է քեմալական Թուրքիայի և Ֆրանսիայի միջև 1921թ. կնքված գաղտնի պայմանագրի մասին: Այդ կապակցությամբ Չիչերինը նույն նամակում գրում է, որ անհրաժեշտ է «...դադարեցնել թուրքերին հանձնել այն զենքը, որը նշված է եղել ցուցակում

պայմանագրի կնքման պահին (խոսքը 1921թ. մարտին ստորագրված խորհրդա(ռուս)-բուրքական մոսկովյան պայմանագրի մասին է- Ո.Ղ.) և դեռևս չի հանձնվել»: Բացի այդ, Գ.Վ.Չիչերինի մեջբերված նամակից երևում է, որ մինչ այդ Թուրքիային չի հանձնվել նաև 1.100.000ռ. ոսկով, «որովհետև ճորտիս մասին համաձայնագիրը ձևական պատրվակներով հետաձգվել է բուրքերի կողմից»: «Չէ՞ որ մենք չենք կարող,- գրում է այնուհետև Չիչերինը,- եթե Սեջլիսը ընդունի համաձայնագիրը (այսինքն՝ վավերացնի վերոհիշյալ ֆրանս-բուրքական պայմանագիրը- Ո.Ղ.), շարունակել ոսկի և զենք տալ Քեմալին»:

57. Չիչերինը նկատի ունի 1921թ. ֆրանս-բուրքական գաղտնի համաձայնագիրը՝ վավերացված Թուրքիայի Սեծ Ազգային Ժողովի (պառլամենտի) կողմից: Մանրամասները տե՛ս՝ Р.Г.Саакян. Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923гг., Ереван, 1986.

58. 1921թ. փետրվարին Մոսկվայում ստորագրված խորհրդա-աֆղանական պայմանագրի լրիվ տեքստը տե՛ս՝ Документы внешней политики СССР, т. III. М. 1959, с. 550-553. Անգլո-աֆղանական պայմանագիրը կնքվեց 8 ամիս անց՝ 1921թ. հոկտեմբերին:

59. Դուշագիրը չի հայտնաբերվել:

60. խոսքը Լ.Դ.Տրոցկու մասին է:

61. Դեռագիրը սաստիկ աղավաղված է: Բոլոր բացթողումները հրապարակվող տեքստում համապատասխանում են արխիվային փաստաթղթին:

62. Ծածկագիրը ստացվել է Մոսկվայում հոկտեմբերի 28-ին, վերձանվել՝ 1921թ. նոյեմբերի 5-ին:

63. Դավանաբար, խոսքն էնվերի կողմից ստեղծված ընդհատակյա «Ազգային միավորման կոմիտեի» մասին է: Փաստաթղթում ընդգծումը Վ.Ի.Լենինինն է:

64. Պատասխանը տե՛ս հ.20 փաստաթղթում:

65. Ըստ երևույթին, համանման տեքստերը Ի.Վ.Ստալինը ուղարկել է նաև այլ անձանց: Փաստաթղթի օրինակը, որոշ տարբերությամբ, տպագրվել է "Большевистское руководство. Переписка. 1912-1927", Москва, 1996 ժողովածուում:

66. Սուրից Յակով Չախարովիչ (1882-1952) – ՈւսՖՍԴ լիազոր ներկայացուցիչ Աֆղանստանում, այնուհետև Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի լիազորված անձ Թուրքեստանում և Միջին Ասիայում:

67. ՈԿ(Բ)Կ ԿԿ Զարթուրոյի նիստի հարցը քննարկվել է 1921թ. նոյեմբերի 3-ին:

Որոշում է ընդունվել՝ «Լրացուցիչ հատկացնել 200.000 ռուբլի ոսկով՝ նշված նպատակների համար: Գործուղել երկու միանգամայն վստահելի, օտար լեզուների և տիրապետող ընկերների և մոտ հինգ օգնականներ»: (РЦХИДНИ,, ф.17, օռ.3, ք.225, լ.1):

68. Տես հ.18 փաստաթուղթը և հ.63 ծանոթագրությունը:

69. «Սիւրբյուն և առաջադիմություն» – երիտթուրքերի բուրժուական-ազգայնական կուսակցություն: Դիմնվել է 1889թ.: Գեղաշրջման միջոցով իշխանության է եկել 1908թ.: Երիտթուրքերի 10-ամյա կառավարման արդյունքում թուրքիան ներգրավվել է համաշխարհային պատերազմի մեջ, իրականացվել է հայերի և քրիստոնյա այլ ժողովուրդների ցեղասպանությունը: Առաջին համաշխարհային պատերազմում թուրքիայի պարտությունից հետո նրա առաջնորդները փախան արտասահման, և կուսակցությունն ինքնալուծարում հայտարարեց: 1919-1920թթ. Ստամբուլի դատարանը հեռակա կարգով մահվան դատապարտեց գլխավոր ռազմական հանցագործներին և ցեղասպանության կազմակերպիչներին:

70. Յուրենև (Կրուտովսկի) Կոնստանտին Կոնստանտինովիչ (1888-1938) – 1921թ. եղել է ՌուՖՍՄ լիազոր ներկայացուցիչ Բուխարայի ժողովրդական խորհրդային Գանրապետությունում:

71. Նամակը չի հայտնաբերվել:

72. Նամակը չի հայտնաբերվել:

73. Նամակը գրելու ժամանակը սահմանված է եղած փաստաթղթերի հիման վրա:

74. Մուհետդինով Միրզա Աբդուլ Կադիր – Բուխարայի հեղկոմի նախագահ: Տես նաև N28 փաստաթուղթը:

75. Նամակագրությունը հայտնաբերել չի հաջողվել:

76. Էլիավա Շալվա Ջուրաբովիչ (1883-1937) – 1919-1920թթ. եղել է թուրքեստանյան ճակատի Գեղազմխորհրդի անդամ, Գանառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և ՌուՖՍՄ ժողովրդների թուրքեստանյան հանձնաժողովի նախագահ, ՌԿ(բ)Կ ԿԿ թուրքեստանյան բյուրոյի անդամ, այնուհետև ՌուՖՍՄ լիազոր ներկայացուցիչ թուրքիայում և Պարսկաստանում: 1922թ. հատուկ առաջադրանքով ուղարկվել է Միջին Ասիա:

77. Խոջան Ֆայզուլև Ուբայդուլահիչ (1896-1938) – 1918թ. նոյեմբերից Մոսկվայում թուրքեստանի խորհրդային Գանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ներկայացուցչությանն առընթեր երիտթուրքարական կոմիտեի

անդամ: 1920թ.-ից՝ երիտրուխարայի-հեղափոխականների կուսակցության  
Թուրքեստանյան բյուրոյի (Տաշքենդ) նախագահ: Նույն տարվա օգոստոս ամսից՝  
Բուխարայի հեղկոմի անդամ, Բուխարայի ժողովրդական խորհրդային  
Հանրապետության ժողովրդական Կոմիսարների (նազիրների) խորհրդի նախագահ  
և արտաքին գործերի ժողկոմ:

78. Զինովև (Ռադոմիլսկի) Գրիգորի եվսեևիչ (1883-1936) – ՈԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի  
անդամ, III (Կոմունիստական) Ինտերնացիոնալի Գործադիր կոմիտեի նախագահ:

79. Ռիկով Ալեքսեյ Իվանովիչ (1881-1938) – ՈԿ(Բ)Կ ԿԿ Զաղբյուրոյի և Կազմբյուրոյի  
անդամ, ՌԽՖՍՀ ժողկոմխորհի ու Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի  
նախագահի տեղակալ:

80. Ցյուրուպա Ալեքսանդր Դմիտրիևիչ (1870-1928) – պարենի ժողկոմ, ՌԽՖՍՀ  
ժողկոմխորհի ու Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի նախագահի տեղակալ:

81. Խոսքը ՈԿ(Բ)Կ ԿԿ Միջինասիական բյուրոյի մասին է:

82. Նկատի է առնվում ՈԿ(Բ)Կ ԿԿ:

83. Ռակովսկի Զրիստիան Գեորգիևիչ (1873-1941) – Ուկրաինայի ԽՍՀ  
ժողկոմխորհի նախագահ և արտաքին գործերի ժողկոմ, ՈԿ(Բ)Կ ԿԿ անդամ:

84. Յարոսլավսկի Եմելյան Միխայլովիչ (1878-1943) – ՈԿ(Բ)Կ ԿԿ քարտուղար:

85. Ռուժուտակ Յան Էռնեստովիչ (1887-1938) – ՈԿ(Բ)Կ ԿԿ Կազմբյուրոյի  
անդամության թեկնածու, ՈԿ(Բ)Կ ԿԿ Միջինասիական բյուրոյի նախագահ:

86. Կուլբիշև Վալերիան Վլադիմիրովիչ (1888-1935) – ՈԿ(Բ)Կ ԿԿ Կազմբյուրոյի  
անդամ և ԿԿ քարտուղար:

87. Խոսքը 1890թ. Թիֆլիսում (այժմ՝ Թբիլիսի) հիմնադրված «Դաշնակցություն»  
հայկական ազգային կուսակցության, նրա անդամների մասին է, որը 1918-1920թթ.  
գլխավորել է առաջին Հայկական Հանրապետությունը: 1923թ. նոյեմբերին  
ինքնալուծարվել է Հայկական ԽՍՀ տարածքում՝ շարունակելով գործել  
արտասահմանում: 1990թ.-ից վերսկսել է իր աշխատանքը Հայաստանում: 1994թ.  
դեկտեմբերից մինչև 1998թ. փետրվարը կուսակցության գործունեությունը  
Հայաստանի տարածքում ժամանակավորապես կասեցված էր:

88. Կարախան (Կարախանյան) Լև Միխայլովիչ (1889-1937) – ՌԽՖՍՀ արտաքին  
գործերի ժողկոմի տեղակալ, հետագայում՝ ԽՍՀՄ դեսպան Թուրքիայում:

89. Ջեմալ փաշայի սպանության մասին կառավարական հաղորդագրություն չի  
հրատարակվել:

## ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 5

#### ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Հատված ՌԽՖՍՀ արտաքին գործերի  
ժողովրդական կոմիսար Գ.Վ.Չիչերինի  
պաշտոնական գրությունից՝ ուղղված  
Վ.Ի.Լենինին. 1 մարտի 1920թ. .... 15
2. Քաղվածք ՈԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի նիստի  
N10 արձանագրությունից 15 մայիսի 1920թ. .... 17
3. Հատված ՌԽՖՍՀ արտաքին գործերի  
ժողովրդական կոմիսարիատի  
հրահանգից (թեզերից)  
Արևելքի երկրներում աշխատող  
կոմունիստների համար.  
[Ոչ ուշ, քան 14 հունիսի 1920թ.] ..... 18
4. Վ.Ի.Լենինի երկտողը Գ.Վ.Չիչերինին.  
[Ոչ ուշ, քան 20 օգոստոսի 1920թ.] ..... 21

5. Թուրքեստանյան ճակատի հրամանատար  
Մ.Վ.Ֆրունզեի և նույն ճակատի  
Յեղազմխորհրդի անդամ Յու.Ի.Իբրահիմովի  
գաղտնի հեռագիրը Ռուսաստանի  
Յեղազմխորհրդի նախագահ Լ.Դ.Տրոցկուն.  
21 օգոստոսի 1920թ. .... 21
6. Հաղորդագրություն՝ զետեղված ՌԽՖՍՀ  
արտգործոժողկոմատի Արևելքի բաժնի  
հույժ գաղտնի տեղեկագրում. 1 սեպտեմբերի 1920թ. .. 23
7. Գ.Կ.Օրջոնիկիձեի՝ Մ.Ֆ.Լուկինի հետ  
ուղիղ զժով կայացած խոսակցությունից.  
[1-4 սեպտեմբերի 1920թ.] ..... 23
8. ՌԽՖՍՀ արտգործոժողկոմի տեղակալ  
Լ.Մ.Կարախանի նամակը ՌԿ(բ)Կ Կենտկոմին.  
26 հունվարի 1921թ. .... 24
9. ՌԽՖՍՀ արտգործոժողկոմ Գ.Վ.Չիչերինի նամակը  
ՌԿ(բ)Կ Կենտկոմին. 18 ապրիլի 1921թ. .... 25
10. ՌԽՖՍՀ արտգործոժողկոմ Գ.Վ.Չիչերինի նամակը  
ՌԿ(բ)Կ Կենտկոմին՝ Էնվերի վերաբերյալ.  
22 ապրիլի 1921թ. .... 27

11. ՌԽՖՍՄ արտագործողկոմ Գ.Վ.Չիչերինի նամակը  
ՌԿ(բ)Կ Կենտկոմին՝ Ե-ի առաջարկի մասին.  
22 ապրիլի 1921թ. .... 28
12. Քաղվածք ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի նիստի  
N17 արձանագրությունից. 23 ապրիլի 1921թ. .... 30
13. ՌԽՖՍՄ արտագործողկոմ Գ.Վ.Չիչերինի  
զաղտնի նամակը Վ.Ի.Լենինին. 1 հուլիսի 1921թ. .... 31
14. Առանձին Կովկասյան բանակի հետախուզական  
վարչության լիազորի զեկույցը. 24 օգոստոսի 1921թ. . 32
15. ՌԽՖՍՄ արտագործողկոմ Գ.Վ.Չիչերինի  
զաղտնի նամակը Վ.Ի.Լենինին.  
14 հոկտեմբերի 1921թ. .... 35
16. Վ.Ի.Լենինի երկտողը Գ.Վ.Չիչերինին  
Ջենալ փաշայի վերաբերյալ նրա նամակի  
կապակցությամբ. 16 հոկտեմբերի 1921թ. .... 37
17. Հատված ՌԽՖՍՄ արտագործողկոմ  
Գ.Վ.Չիչերինի նամակից՝ ուղղված Վ.Ի.Լենինին.  
20 հոկտեմբերի 1921թ. .... 37

18. Թուրքիայում ՌԽՖՍՄ լիազոր ներկայացուցիչ  
Ս.Պ.Նազարենուսի հույժ գաղտնի ծածկագիրը՝  
ՌԽՖՍՄ արտգործոժողկոմ Գ.Վ.Չիչերինին,  
Վ.Ի.Լենինին մակագրությամբ. 21 հոկտեմբերի 1921թ. . 39
19. ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամ Վ.Ի.Ստալինի  
պաշտոնական գրությունը Ռուսաստանի  
Հեղազմխորհրդի նախագահ Լ.Գ.Տրոցկույն.  
2 նոյեմբերի 1921թ. .... 41
20. ՌԽՖՍՄ արտգործոժողկոմ Գ.Վ.Չիչերինի ծածկագիրը  
Թուրքիայում ՌԽՖՍՄ լիազոր ներկայացուցիչ  
Ս.Պ.Նազարենուսին. 6 նոյեմբերի 1921թ. .... 43
21. Ի.Վ.Ստալինի պատասխան երկտողը Վ.Ի.Լենինին.  
7 նոյեմբերի 1921թ. .... 44
22. ՌԽՖՍՄ արտգործոժողկոմ Գ.Վ.Չիչերինի նամակը՝  
ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամ Ի.Վ.Ստալինին.  
11 դեկտեմբերի 1921թ. .... 45
23. Հատված Թուրքեստանի հանձնաժողովի անդամ  
Յուկերմանի նամակից՝ Աֆղանստանում ՌԽՖՍՄ  
լիազոր ներկայացուցիչ Ֆ.Ֆ.Ռասկոլնիկովին.  
[1922թ. մինչև օգոստոսը] ..... 47

24. Հատված Աֆղանստանում ՌխՖՍՀ լիազոր  
 ներկայացուցիչ Ֆ.Ֆ.Ռասկոլնիկովի հեռագրից՝  
 ՌխՖՍՀ արտգործժողկոմի  
 տեղակալ Լ.Մ.Կարախանին. 19 մարտի 1922թ. .... 48
25. Հատված ՌԿ(բ)Կ ԿԿ Թուրքեստանյան բյուրոյի անդամ,  
 Թուրքեստանում Համառուսաստանյան Արտակարգ  
 Հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչ  
 Յու.Խ.Պետերսի նամակից՝ ուղղված  
 ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամ և  
 ԿԿ Գլխավոր քարտուղար Ի.Վ.Ստալինին.  
 3 ապրիլի 1922թ. .... 49
26. Հատված Բուխարայի ժողովրդական Խորհրդային  
 Հանրապետության ժողկոմխորհի նախագահ  
 և արտգործժողկոմ, ՌԿ(բ)Կ ԿԿ Միջինասիական  
 բյուրոյի անդամ Ֆ.Խոջանի նամակից՝  
 ՌխՖՍՀ արտաքին գործերի ժողկոմի  
 տեղակալ Լ.Մ.Կարախանին. 5 ապրիլի 1922թ. .... 50
27. Հատված ՌխՖՍՀ արտգործժողկոմի տեղակալ  
 Լ.Մ.Կարախանի պաշտոնական գրությունից՝  
 ուղղված ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյին և ՌԿ(բ)Կ ԿԿ  
 Գլխավոր քարտուղար Ի.Վ.Ստալինին.  
 25 ապրիլի 1922թ. .... 52

28. Հատված Գ.Կ.Օրջոնիկիձեի և Շ.Ձ.Էլիավայի  
 հեռագրից Ի.Վ.Ստալինին. 12 մայիսի 1922թ. .... 53
29. Հատված Ի.Վ.Ստալինի պատասխան հեռագրից,  
 ուղարկված Տաշքենդ՝ Գ.Կ.Օրջոնիկիձեին.  
 14 մայիսի 1922թ. .... 53
30. Քաղվածք ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի նիստի N7  
 արձանագրությունից. 18 մայիսի 1922թ. .... 54
31. Հատված ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամ  
 և ԿԿ Գլխավոր քարտուղար Ի.Վ.Ստալինի  
 հեռագրից, ուղարկված Տաշքենդ՝  
 Գ.Կ.Օրջոնիկիձեին. 19 մայիսի 1922թ. .... 56
32. Քաղվածք ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի նիստի N22  
 արձանագրությունից. 17 օգոստոսի 1922թ. .... 57
- II. ԱՐՔՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....58

A ii  
85081